

Գանատայի դեսպան Էնտրու Թըրըրը այցելեց Մոնթրեալի եւ Լաւալի Հայ կեդրոնները



Կարդալ էջ 3

Հայ Դատի յանձնախումբը պատուեց Գանատայի Ծերակոչոյտի անդամ Լէօ Հուսարոսը



Կարդալ էջ 5

Ատրպէյճան կը քանդէ Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի շէնքը

Թեկերամ ցանցին վրայ տարածուած է տեսանիւթ մը, ուր ցոյց կը տրուի բռնադրուած Ստեփանակերտի մէջ ատրպէյճանցիներու կողմէ Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի շէնքի քանդումը: Տեսանիւթ է նաեւ խորհրդարանին կից գրեթէ հիմնովին քանդուած «Ազատամարտիկներ» շէնքը:

Դեսպան Էնտրու Թըրըրը հանդիպեցաւ Գանատայի Հայ Դատի յանձնախումբին հետ



Հայաստանի մէջ Գանատայի դեսպան Էնտրու Թըրըրը Փետրուար 22-ին այցելեց Թորոնթոյի Հայ Կեդրոն եւ հանդիպում ունեցաւ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչներուն հետ: Հանդիպման ընթացքին արծարծուեցան Գանատա-Հայաստան երկկողմանի յարաբերութիւնները: Քննարկման ընթացքին Հայ Դատի պատուիրակութեան կողմէ ներկայացուեցան յանձնախումբի մտահոգութիւններն ու առաջարկները կապուած բռնի տեղահանուած Արցախի ժողովուրդին եւ Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան գծով Գանատայի աջակցութեան:

«Արցախ, Մեր Տուն» Գանատայի Հայոց Թեմի մարդասիրական ծրագիր



Օրհնութեամբ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի, Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին, Փետրուար 12-18, Հայաստանի վեց շրջաններու մէջ իրականացաւ «Արցախ, Մեր Տուն» մարդասիրական ժանդակութիւն՝ Արցախէն բռնի տեղահանուած եւ Հայաստան բնակութիւն հաստատած հայորդիներուն համար: Մանրամասնութիւնները կարդալ էջ 9:



HONDA GABRIEL

THE ALL-NEW 2023 HONDA CR-V TOURING HYBRID

KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Ընկերվար Միջազգայնականի Խորհուրդի Բանաձեւը Լեռնային Ղարաբաղի Հարցով

ՀՅԴ Բիւրոյի Հայ դատի Կեդրոնական գրասենեակը կը հաղորդէ, որ 24-25 փետրուարին Մատրիտի մէջ տեղի ունեցաւ Ընկերվար միջազգայնականի խորհուրդի նիստը, Սպանիոյ Ընկերվարական աշխատակազմի կողմից կազմակերպուած մէջ:

Շուրջ հարիւր երկիրներէ քաղաքական կուսակցութիւններ համախմբող մոլորակի մեծագոյն քաղաքական այս կազմակերպութեան ՀՅ Դաշնակցութիւնը կ'անդամակցի 1907 թուականէն, ՀՅԴ Բիւրոյի նախկին անդամ, ՀՅԴ Հայ դատի Կեդրոնական խորհուրդի անդամ Մարիո Նալպանտեան Ընկերվար միջազգայնականի փոխնախագահներէն է, որ մասնակցած է խորհուրդի եւ նախագահութեան նիստերուն, եւ ընտրուած է երկնամտական ու կազմակերպական հարցերու յանձնարումի անդամ:

Ընկերվար միջազգայնականի նախագահ, Սպանիոյ վարչապետ Փետրո Սանչես կազմակերպութեան նախագահութեան եւ խորհուրդի նիստերու իր քաղաքական իրաւաստութեան մէջ ակնարկած է նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը:

Ընկերվար միջազգայնականի նախագահութեան եւ խորհուրդի նիստերուն, Մարիո Նալպանտեանը ներկայացուցած է Ազգայնականի ցեղասպանական քայլերով Արցախի ցեղային գոման հետեւանքով ստեղծուած իրավիճակն ու մարտահրաշարակները, ինչպէս նաեւ Ազգայնականի կողմէ Հայաստանի Հանրապետութեան ուղղուած բռնութեան քայլերը, սպառնալիքներն ու պահանջները:

Ընկերվար միջազգայնականի խորհուրդը որդեգրած է Արցախի հարցով բանաձեւ մը, որուն մէջ կը նշուի.

«Ընկերվար միջազգայնականը կ'աջակցի Հայաստանի եւ Ազգայնականի միջեւ բանակցութիւններուն՝ ուղղուած խաղաղութեան համաձայնագրի ստորագրման: Երջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման նպաստելու համար նման համաձայնութիւն պէտք է ձեռք բերուի առանց ուժի կամ անոր սպառնալիքի կիրարկման՝ հիմնուած միջազգային իրաւունքի եւ զիւրանագիտական փորձառութեան վրայ, ներառեալ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերջնական քաղաքական կարգաւորման ուղղուած միջազգայնորէն հովանաւորուող խաղաղ գործընթացը եւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու պահպանումը:

Յիշատակ արժէք իրաւունքներու եւ անվտանգութեան լիարժէք իրականացումը իր պատկանական տարածքին մէջ:

Համաձայն Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի եւ Հայաստանի ու Ազգայնականի միջեւ հակամարտութեան վերաբերեալ մեր երկարամեայ սկզբունքային քաղաքականութեան, ինչպէս նաեւ հաշուի առնելով Արդարադատութեան միջազգային դատարանի 2023 թուականի նոյեմբերի 17-ի որոշումը ժամանակաւոր միջոցներ կիրարկելու վերաբերեալ, որ Ազգայնականին կը պարտաւորեցնէ «ապահովել այն անձերուն վերադարձը, որոնք լքած են Լեռնային Ղարաբաղը 2023 թուականի սեպտեմբերի 19-էն ետք եւ ցանկութիւն ունին վերադառնալ Լեռնային Ղարաբաղ, կրնան այդ ընդ անվտանգ, անխռնելի ու եւ արագ», ինչպէս նաեւ հրաժարի «որեւէ գործողութեան, որ ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն ուղղուած է Հայերուն Լեռնային Ղարաբաղէն տեղահանելուն», մենք կոչ կ'ուղղենք՝

Մինչեւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերջնական քաղաքական կարգաւորումը եւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու լիարժէք իրականացումը՝ ապահովել ժողովուրդի հաւաքական, անկաշկանգ եւ անվտանգ վերադարձը հայրենիք: Նաեւ՝ Լեռնային Ղարաբաղի համար միջազգային կանոններով երաշխաւորուած միջանկեղ կարգավիճակ ապահովել՝ երաշխաւորելով քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներու ամբողջ ծաւալը, տրամադրելով Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի անվտանգութեան արդիւնաւէտ երաշխիքներ, ինչպէս նաեւ Հայաստանի հետ անխռնելի ու ցամաքային կապ:

Ազատ արձակել ռազմագերիները եւ կայանաւորուած անձերը:

Երջանին մէջ փոխադրութեան եւ կապի այլ միջոցները ապաշրջափակել ամբողջական կերպով եւ համաժամանակեայ՝ առանց ինքնիշխանութեան որեւէ սահմանափակման:

Ընկերվար միջազգայնականը պատրաստ է աջակցելու այդ գործընթացներուն իր բոլոր միջոցով՝ իր միջոցով եւ իր անդամ կուսակցութիւններուն ու կազմակերպութիւններուն մասնակցութեամբ»:

Տար Իտալիոյ Չարմաքան արժանացաւ «Կիլիկեան Ասպետ» Ծրանշանին

15 Փետրուար 2024-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը այցելեց Մոնթրէալի գաղութի ղեկավարներէն՝ Պրն. Ստեփան Չարմաքանին, անձամբ պարգեւատրելու զայն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռի «Կիլիկեան Ասպետ» Ծրանշանով:



Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ 65-ամեակի տօնակատարութեան ծիրէն ներս, Արամ Ա. Վեհափառ Հայրապետի սրբատառ Կոնդակով, Պրն. Չարմաքան արժանացաւ վերոնշեալ պատիւին:

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերակցէին՝ Արժանապատիւ Տ. Գառնիկ Աւ. Քնյ. Գոյունեան, Հոգեւոր Հովիւ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ, Պրն. Սարո Տէր Պետրոսեան, Ատենապետ նոյն եկեղեցւոյ եւ Տիկին Աննա Պուլկարեան՝ Ատենապետի Ազգային Վարչութեան: Բարգէն Արքեպիսկոպոս մեծապէս գնահատեց Պրն. Չարմաքանի վաստակն ու անձնուէր ծառայութիւնը Մոնթրէալ գաղութին:

Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի Խմբակցութիւններու Յայտարարութիւն

Սոյն թուականի փետրուարի 27-ին Հայաստանի Հանրային հեռուստաընկերութեան եթերում Հայաստանի Հանրապետութեան փոխվարչապետ Տիգրան Խաչատրեան անդադարձել է ցեղասպանութեան եւ նրա սպառնալիքի տակ Արցախից բռնի տեղահանումը մեր հայրենակիցների համար Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմից առաջարկուող աջակցութեան ծրագրերին:

Մեր գնահատմամբ՝ փոխվարչապետի միջոցով արցախեան հանրութեանը մատուցուող Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմից նախատեսուող ծրագրերը համարժէք չեն տիրող իրավիճակին:

Հարկ ենք համարում չեչտել, որ մինչ այժմ իրականացուած որեւէ ծրագիր չի քննարկուել Արցախի Հանրապետութեան ժողովրդի կողմից օրինական լիազօրութիւն ունեցող որեւէ կառույցի, այդ թւում ժողովրդի ուղղակի քուէով ընտրուած Ազգային ժողովի հետ: Իսկ զանազան միջոցներով մեր կողմից ներկայացուած առաջարկներն անտեսուել են:

Յատկապէս անընդունելի է Արցախից տեղահանումը ժողովրդի համար բնականօրէն ձեռք բերելու կապակցութեամբ դեռեւս քննարկուող ծրագրերը, որը, հարցի քաղաքական եւ ընկերային համակողմանի քննարկման արդիւնքում, ակնյայտօրէն, չի բաւարարելու բռնի տեղահանումը մեր հայրենակիցների նուազագոյն սպասելիքներն ու ակնկալիքները: Նման որոշումների կայացումը յանգեցնելու է մեր հայրենակիցների հիասթափութեանն ու դժգոհութեանը, որի արդիւնքում կը խթանուի արտագաղթը եւ բողոքների այլիքը, կը խաթարուի մեզ համար օրասինդիլը՝ հաւաքական վերադարձի ակնկալիքը:

Կոչ ենք անում զերծ մնալ չկշռադատուած ոչ համարժէք քայլերից: Միաժամանակ, վերահաստատում ենք փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող խնդրայարույց հարցերի շուրջ կառուցողական քննարկումներ իրականացնելու մեր պատրաստակամութիւնը՝ ողջախոս, արժանապատուութիւնը չնստեցնող որոշումների յանգելու համար:

«ԱԶԱՏ ՀԱՅՐԵՆԻԿ-ՔՄՊ» ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆ
«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻԿ» ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆ
«ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆ
«ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆ
«ԱՐՅԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆ
28 փետրուար 2024

Գանատայի դեսպան Էնտրու Թըրըրը այցելեց Մոնթրէալի եւ Լաւալի Հայ կեդրոնները

26 Փետրուար 2024-ին, Հայաստանի մէջ Գանատայի դեսպան Էնտրու Թըրըրը այցելեց Մոնթրէալի եւ Լաւալի Հայ կեդրոնները, մօտէն ծանօթանալու տասնամեակներէ ի վեր հիմնուած Հայ կեդրոններուն եւ անոնց հովանիին ներքեւ գործող միութեանց համայնքային եւ համազանապատական գործունէութեանց: Նոյն ծիրէն ներս, Փետրուար 22-ին դեսպանը այցելած էր նաեւ Թորոնթոյի Հայ կեդրոն եւ հանդիպում ունեցած էր Գանատայի Հայ Դատի յանձնարումի ներկայացուցիչներուն հետ: Նշենք, որ Հոկտեմբեր 25-ին Երեւանի մէջ կայացաւ դեսպանատան քաղաքական հանդիսաւոր արարողութիւնը, որուն ընթացքին Գանատայի Դոզը բարձրացուցին ՀՀ-ի մէջ Գանատայի արտակարգ եւ լիազօր դեսպան Էնտրու Թըրըրըն ու Գանատայի Արտաքին Գործոց նախարար Մելանի ժոյին:

Դեսպանը նախ առանձնաբար հանդիպում ունեցաւ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատրեանի հետ, ապա անոր ընկերացան ՀՅԴ Գանատայի Հայ Դատի գրասենեակի տնօրէն Սեւակ Պէլեանն ու յանձնարումի անդամ Հրակ Ջինչինեան, Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Տիգրան եւ անդամներ՝ Հրակ Տարաքանեան, Յովիկ Թիւֆէնքճեան եւ Նորա Արուշեան, Մոնթրէալի «Միհրան Փափազեան» կոմիտէութեան ներկայացուցիչ Արա Գաթարոյեանն ու անդամներ՝ Կէրի Չարքեան, Յարութ Դալիթեան եւ Արտո Աճէմեան, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենապետ Սարո Տէր Պետրոսեանն ու անդամ Նուշիկ Էլոյեան, ԳԵՄ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Մոսիկ Արզումանեան, ՀՄԸՄ Գանատայի Երջանային վարչութեան ներկայացուցիչ Մանուէլ Քէօսէան, Համազգայինի Գանատայի Երջանային վարչութեան ներկայացուցիչ Թամար Շահինեանն ու «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրականի անդամ Սոնա Թիթիզեան:

Դեսպանը այցելեց Սուրբ Յակոբ եկեղեցի, «Հորիզոն» խմբագրատուն, ուր ծա-

նօթացաւ 45-ամեայ շաբաթաթերթին աշխատանքներուն, ԳԵՄ-ի «Լեռն Շանթ եւ Բեկոր Աչոս» երիտասարդականի հաւաքավայր, Համազգայինի «Մուշեղ Իշխան» գրադարան, ՀՄԸՄ Կամբի «Հայկ Մարգարեան» մարզասրահ եւ տեղեկացաւ Հայ Կեդրոնի յարկին տակ տարուող բազմերանգ գործունէութեանց:

Անկէ ետք այցելեց Սուրբ Յակոբ Ազգային վարժարան, ուր դեսպանին ընկերացան վարժարանի տնօրէնուհի Լորի Ապրաքեանն ու Հոգաբարձութեան անդամ Անի Պապիկեան: Դեսպանը իրազեկ դարձաւ վարժարանէն ներս դասաւանդութեան ոճին, տարուած արտագասարանային աշխատանքներուն եւ աշակերտներուն ստեղծագործական գործունէութեան:

Ապա ան ուղղուեցաւ Լաւալի Հայ կեդրոն, ուր զինք զիմաւորեցին ՀՅԴ «Սարգիս Զէյթիկեան» կոմիտէութեան ներկայացուցիչ Հրանդ Թաշեանն ու անդամ Սարգիս Եսպուլեան, «Միհրան Փափազեան» կոմիտէութեան անդամ Քեոի Կիրակոսեան եւ Լաւալի Հայ Դատի յանձնարումի փոխ ատենապետ Հերակ Զերկեան: Դեսպանը հոն եւս այցելեց Սուրբ Գէորգ եկեղեցի եւ ծանօթացաւ կեդրոնի հովանիին տակ գործող միութեանց տարած աշխատանքներուն:

Յիշեցնենք նաեւ, որ Էնտրու Թըրըրը Հայաստանի դեսպան նշանակուեցաւ 2023 թուականի Հոկտեմբերին. ան միջազգային քաղաքական ասպարէզ մուտք գործած է 2002-ին: Պետական գրասենեակներուն մէջ ան պաշտօնավարած է խորհրդարանական յարաբերութիւններու բաժանմունքին, Արեւելեան եւ Հարաւային Աֆրիկէի հետ յարաբերութիւններու, ինչպէս նաեւ իսլամական համայնքներու աշխատանքային խումբի եւ Մերձավոր Արեւելքի հետ յարաբերութիւններու բաժանմունքներուն մէջ: Արտերկրի մէջ ան ծառայած է Մէլուտական Արաբիոյ (2004-2007), Սուրիոյ (2011-2012), Աֆղանիստանի (2013-2015), Փաքիստանի (2015-2017) եւ Իրաքի (2017-2019) մէջ:

Նահատակութենէն 80 տարի ետք. Միսաք Մանուշեանի անիւնները կ'ամփոփուին Ֆրանսայի Ազգային Պանթէոնին մէջ

Ֆրանսական դիմադրութեան առաջամարտիկ, Ֆրանսայի ազգային հերոս Միսաք Մանուշեանի անիւնները 21 փետրուար 2024-ին, նահատակութենէն ութսուն տարի ետք, պետական բարձրագոյն մակարդակով, կ'ամփոփուին Փարիզի պանթէոնին մէջ:

Միսաք Մանուշեան այսպիսով կը դառնայ առաջին օտարազգի գործիչը, որ մուտք կը գործէ Ֆրանսայի մեծութիւններու անիւնները ամփոփող պանթէոն, ուր կ'ամփոփուին նաեւ Մանուշեանի կնոջ՝ Մելինէի անիւնները:

Միսաք Մանուշեան ծնած է 1 սեպտեմբեր 1906-ին, Ատրեւմանի մէջ, որ կը գտնուի Մալաթրայէն հարաւ, Եփրատի աջ ափին, պատմական Կոմմագենէ երկրամասին մէջ եւ անցեալին կոչուած է Հիւսիս Մանուշ: Մամուլէթ ու Ազգիկի վիլայէթի կազմէն ներս գտնուող քաղաքը ունէր շուրջ տասնհինգ հազար բնակչութիւն, որուն 5200-ը հայեր էին եւ ունէին երեք եկեղեցի, որոնց կողքին կը գործէին դպրոցներ:

Մանուշեանները այդպէս գործնական էին: Գէորդ Մանուշեան ունէր երեք որդի՝ Կարապետ, Միսաք եւ Հայկ:

Մեծ եղեռնի օրերուն՝ 1915-ին, թուրքեր Ատրեւմանի հայ տղամարդիկը տեղույն վրայ կոտորելէ ետք, մնացած հայ բնակչութիւնը յուլիս 28-ին տեղահանուեցին դէպի Սամաստ: Ատրեւմանցիք յետոյ Սամաստէն Ուրֆա քոչուեցան: Ուրֆայի հայոց հերոսամարտը սկսաւ սեպտեմբեր 29-ին: Գէորդ Մանուշեան մասնակցեցաւ հերոսամարտին եւ ինկաւ նահատակ:

Ուրֆայի հերոսական դիմադրութիւնը հոկտեմբեր 23-ին ընկճուեցաւ: Քարուքանդ եղած քաղաքին հայութիւնը քոչուեցաւ դէպի Գողգոթայ:

Մանուշեանները քոչուեցան դէպի Պերէճիկ, եւ հոնկէ՝ Նուսէյպին: Անոնք Մեհրապ դիւղի թուրքերու տուններուն մէջ ծառայութեան մտան: Մայրը հիւանդացաւ եւ սովածահ եղաւ:

Առաջին Աշխարհամարտը աւարտեցաւ 1918-ի աշնան: Կարապետ եւ Միսաք Մանուշեան եղբայրները բազում զրկանքներէ ետք քալելով հասան Այնթապ, ուր տարբեր որբանոցներու մէջ պատսպարուեցան:

Կիլիկիոյ պարպումէն ետք որբերը 1922-ին Լիբանան փոխադրուեցան: Կարապետ ժողովի, իսկ Միսաք ժողովի որբանոցը մտան:

Կարապետ Մանուշեան 1923-ին այլ որբերու հետ Ֆրանսա տեղափոխուեցաւ եւ Մարսէյի մէջ բնակութիւն հաստատեց: Կրտսեր եղբայրը՝ Միսաք, 1924-ին միացաւ անոր:

Միսաք Մանուշեան 8 հոկտեմբեր 1924-ին քաղաքապետարանին մօտ արձանագրուեցաւ իբրեւ կահագործ:

Կարապետ եւ Միսաք եղբայրները 1925-ի ամբան Փարիզ փոխադրուեցան: Միսաք ինքնաշարժի կոտորներ պատրաստող «ժեւելօ» ընկերութեան մէջ աշխատանքի մտաւ: Անոնք Փարիզի 15-րդ քաղաքամասի Ֆիզօ փողոցին վրայ բնակարան վարձեցին: Անոնց Հայկ եղբայրը, որ Ցեղասպանութենէն վերապրած եւ Հայկապի մէջ բնակութիւն հաստատած էր, Փարիզ հասնելով միացաւ իր եղբայրներուն:

Կարապետ Մանուշեան՝ թոքախտէ վարակուած, հիւանդանոց մտաւ եւ մահացաւ 1927 մարտին:

Միսաք 1928-ին «Միթրոն»-ին ք-

նաշարժի արտագրութեան գործարանը աշխատանքի մտաւ:

Միսաք Մանուշեան 1930-ին Ֆրանսացի-հայ նորագոյն գրողներու ընկերութեան հիմնադիրներէն եղաւ:

Միսաք եւ բանաստեղծ Սեմա (Գեղամ Աթմաճեան) 1933-ին՝ «Ջանք» ամսագրի մէջ 1935-ին՝ «Մշակոյթ» գրական պարբերականը հիմնեցին: «Ջանք»-ի եւ «Մշակոյթ»-ի մէջ ֆրանսական գրականութեան եւ հայկական մշակոյթին նուիրուած յօդուածներ կը տպագրուէին:

Միսաք անտեսական ճգնաժամի պատճառով «Միթրոն»-ի գործարանին մէջ աշխատանքը կորսնցուց եւ ապրուստ ճարելու համար սկսաւ աշխատիլ իբրեւ բնորդ՝ քանդակագործներու համար:

Նոյն ժամանակ ան Սորպոնի համալսարանը մտաւ եւ հետեւեցաւ զրականութեան, իմաստասիրութեան եւ պատմութեան նուիրուած դասախօսութիւններուն: Միաժամանակ ան հայերէնի թարգմանեց Շարլ Պոտլէրի, Փոլ Վեռլէնի ու Ժան Ռեմբոյի կարգ մը բանաստեղծութիւններ:

Միսաք Մանուշեան 1934-ին Ֆրանսայի Համայնավար կուսակցութեան անդամ եղաւ:

Հայաստանի օգնութեան կոմիտէի կազմակերպած երեկոներէն մէկուն ժամանակ, 1934-ին, Միսաք ծանօթացաւ Մելինէ Ասատուրեանի հետ:

Մելինէ ծնած էր 1913-ին, Պոլիս: Ցեղասպանութեան ժամանակ կորսնցուցած էր ծնողքը, եւ մեծ քրոջ՝ Արմենուհիի հետ մանկութիւնը Իզմիրի աւետարանականներու որբանոցին մէջ անցուցած էր: Իզմիրի 1922-ի աղէտէն ետք քրոջ եւ այլ որբերու հետ Յունաստան, Կորնթոսի որբանոցը փոխադրուած էր:

Արմենուհի եւ Մելինէ Ասատուրեան քոյրերը՝ այլ որբերու հետ, 1926-ին Ֆրանսա փոխադրուեցան եւ Մարսէյի մէջ բնակութիւն հաստատեցին: Անոնք յետոյ Փարիզ տեղափոխուեցան: Մելինէ Փարիզի Ռենսի արուարձանին մէջ հաստատուած Դպրոցասէր Տիկնանց վարժարանը մտաւ: Քոյրը՝ Արմենուհի դերձակուհի եղաւ:

Դպրոցը աւարտելէն ետք Մելինէ եւ քոյրը Փարիզի վեցերորդ քաղաքամասին Լուվուս փողոցին վրայ Սերովիէ Փափագեանէն բնակարան վարձեցին: Սերովիէ դիմացի տան մէջ կը բնակէր եւ Մամիկոն Ազնաւուրեանի կնոջ՝ Քնար Պաղտասարեանի հօր հօրեղբայրն էր: Մամիկոնի եւ Քնարի որդին էր Շահնուր Վաղինակ Ազնաւուրեան, ապագայ երգիչ Շարլ Ազնաւուր: Ասատուրեան քոյրերը եւ Ազնաւուրեանները շուտով մտերմացան:

Միսաք Մանուշեան 1935-ին Հայաստանի օգնութեան կոմիտէի անդամ եղաւ եւ սկսաւ խմբագրել կոմիտէի օրական «Ջանգու» շաբաթաթիւթը:

Իր կարգին Մելինէ Ասատուրեան 1935 յուլիսին Հայաստանի օգնութեան կոմիտէի Պելլիլի շրջանի ներկայացուցիչ ընտրուեցաւ:

Միսաք եւ Մելինէ Հայաստանի օգնութեան կոմիտէի Կեդրոնական վարչութեան անդամ ընտրուեցան եւ գործօն մասնակցութիւն բերին Ֆրանսայի ժողովրդային ճակատին կազմակերպած ցոյցերուն ու գործադուլներուն:

Միսաք եւ Մելինէ 22 փետրուար



1936-ին ամուսնացան:

Սպանիոյ քաղաքացիական պատերազմը՝ հանրապետականներուն եւ ազգայնականներուն միջեւ, սկսաւ 1936-ի յուլիսին: Համայնավար միջազգայնականը՝ Քոմինթընը ձեռնամուխ եղաւ միջազգային զօրագուններու կազմակերպման: Տարբեր երկրներէ հաւաքազրուող կամաւորները սկսան Սպանիա ուղարկուիլ, ազգայնականներուն դէմ կռուելու եւ հանրապետական Սպանիան պաշտպանելու համար:

Միսաք Մանուշեան գործօն մասնակցութիւն բերաւ միջազգային զօրագուններու կազմակերպման աշխատանքներուն: Իր ջանքերով մէկ միլիոն ֆրանք հանգանակուեցաւ եւ Քոմինթէնի տրամադրութեան տակ դրուեցաւ: «Ջանգու»-ի մէջ Սպանիոյ քաղաքացիական պատերազմի եւ միջազգային զօրագուններու գործունէութեան մասին մանրամասն տեղեկութիւններ սկսան հրատարակուիլ:

Միսաք Մանուշեան 1937-ին մասնակցեցաւ Ֆրանսայի Համայնավար կուսակցութեան համագումարին՝ իբրեւ հայկական համայնավար բաժանմունքի ներկայացուցիչ:

Հայաստանի օգնութեան կոմիտէի Կեդրոնական վարչութիւնը 1938 յունուարին իր երկրորդ քարտուղար Միսաք Մանուշեանը Փարիզէն Լիոն ուղարկեց, շրջանի երեք՝ «Միկոյեան», «Վեբելք» եւ «Ձորագէտ» մասնաճիւղերուն միջեւ եղած տարակարծութիւնները կարգաւորելու յանձնարարութեամբ:

Լիոնի երրորդ քաղաքապետարանի սրահին մէջ կազմակերպուած հրատարակային ժողովին ընթացքին, համերաշխութիւնը վերականգնելու վերաբերեալ իր ելոյթով Մանուշեան խիստ քննադատութեան ենթարկեց հասարակական գործերը իրենց շահամուտութեան ծառայեցնող անապառները եւ բոլոր անոնք, որոնք պատճառ կը դառնան պառակտումներու եւ հասարակական գործերու ջլատման:

Մանուշեան երեք ամիս Լիոն մնաց եւ յաջողեցաւ վերականգնել համերաշխութիւնը:

Երկրորդ Համաշխարհային պատերազմը սկսաւ 1 սեպտեմբեր 1939-ին, Գերմանիոյ Լեհաստան ներխուժումով:

Ֆրանսական կառավարութիւնը սեպտեմբեր 3-ին արգիլեց Համայնավար կուսակցութեան գործունէութիւնը եւ ձեռնարկեց Համայնավարներու զանգուածային ձերբակալութեան: Առաջին

ձերբակալուածներուն մէջ էր Միսաք Մանուշեան:

Մանուշեանի բնակարանը խուզարկուեցաւ եւ անոր շատ մը ձեռագիրները գրաւուեցան ու ոչնչացուեցան:

Երեք ամիս ետք Միսաք, իբրեւ արտասահմանցի, ազատ արձակուեցաւ եւ Նորմանտի, Ռուէնի շրջանը ուղարկուեցաւ:

Գերմանական զօրքերու Ֆրանսա ներխուժումէն ետք, 1940 յունիսին, Մանուշեան ֆրանսական բանակի նահանջող խումբերուն հետ երկիրն հարաւային, գրաւուած զերծ մնացած շրջանները տեղափոխուեցաւ:

Նոյն ժամանակ Մելինէ, որ Փարիզի համայնավար ընդյատակեայ կազմակերպութիւններուն միջեւ կապի պատասխանատուն էր, ամուսինը իր մօտ կանչեց:

Փարիզ վերադառնալով, Միսաք իր շուրջ հաւաքեց խումբ մը հայ մտաւորականներ, որոնց հետ նախապէս գործակցած էր «Ջանգու»-ի մէջ, նպատակ ունենալով միջազգային շոկատ կազմակերպել եւ գործօն մասնակցութիւն բերել ֆրանսական դիմադրութեան շարժման:

Գերմանիոյ Խորհրդային Միութեան վրայ յարձակման օրը՝ 22 յունիս 1941-ին, կեսթափոն ձերբակալեց Միսաք Մանուշեանն ու անոր ընկերակիցները եւ Քոմինթէն՝ համակերտնացման ճամբար ուղարկեց:

Քանի մը շաբաթ ետք համակերտնացման ճամբարէն փախչելով, Միսաք Մանուշեան Փարիզ վերադարձաւ, որմէ ետք ան իր կնոջ հետ 14-րդ քաղաքամասի Փրեսանս փողոցին վրայ բնակութիւն հաստատեց:

Միսաք Մանուշեան գործօն մասնակցութիւն բերաւ ֆրանսական դիմադրական շարժման: 1943 փետրուարին ան «Սթալինկրատ» շոկատին միացաւ եւ անոր ղեկավարը եղաւ:

«Սթալինկրատ» շոկատը սկսաւ յարձակումներ կազմակերպել գերմանական զօրքերուն վրայ: Փարիզի արեւմտեան արուարձան Լեւալուա-Փերէլէի մէջ էսէսականներու խումբ մը յարձակման ենթարկուեցաւ, զօրավարներ Շառլ-Մայուրկ ու Ռիթէր անհետեւեցան, եւ զինուորական փոխադրակառքեր պայթեցուցան:

Մանուշեան միաժամանակ ընդհանուր յիսուն հօգիչ բաղկացած երեք ջոկատներու ղեկավարութիւնը ստանձնեց եւ աշխատանք տարաւ սովետական բանակի հայ ռազմագերիներուն օգնելու գործին մէջ: 1943 մայիսէն սկսեալ Փարիզի մէջ ան եւ իր զինակից Ալեքսան Կոստանդինեան կրցան հայ ռազմագերիներուն հետ կապ հաստատել:

Մանուշեան եւ իր ընկերները նաեւ հակագերմանական թուրքերը կը հրատարակէին ու կը տարածէին զօրանոցներուն մէջ, թաքտոցներ կը դասաւորէին բանակը լքող զինուորներուն համար եւ կ'ապահովէին անոնց մուտքը դիմադրութեան շարքերը:

Միսաք Մանուշեանի անունն ու սխրանքները տարածուած էին Ֆրանսայի մէջ եւ անկէ դուրս: Կեսթափոն ամէն միջոցի կը դիմէր՝ ձեռք ձգելու համար զայն: Գերմանացիք անոր զխուսէ համար հինգ միլիոն մարդ պարգև խոստացած էին:

«Կարմիր որմազ»-ը

Մանուշեանը վարկաբեկու հա-

Հայ Դատի յանձնախումբը պատուեց Գանատայի Ծերակոյտի անդամ Լէօ Հուսարոսը

Կազմակերպութեամբ ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբին, Կիրակի, 3 Մարտ 2024-ին, երեկոյեան ժամը 7-ին, Մոնթրէալի Հայ կեդրոնի «Արթօ և Ալիս Մարգարեան» ճաշարահանրահանումը մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն, ի պատիւ Գանատայի Ծերակոյտի անդամ Լէօ Հուսարոսի, ներկայութեամբ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի, Լաւալի եւ Մոնթրէալի կոմիտէներուն ու Հայ Դատի յանձնախումբերուն, պատկան մարմիններու Հայ կեդրոնի հովանիին ներքոյ գործող միութիւններու եւ Մոնթրէալ-Լաւալ շրջանին մէջ գործող հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Լաւալի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Հերակ Էրեկեան, որ իր խօսքին մէջ նախ ողջունեց ծերակուտականի անդամն ու իր որդեգրած հայանպատ կեցողութեամբ, ինչպէս նաեւ Արցախի շրջափակման եւ արցախահայրենիքի կորուստի վերաբերեալ իր ցրտամտ կարծիքները:

Ըննազգային ենթարկման անհուն ծանրացումներ անոր հրապարակաւ եւ պետական ոլորտներէն ներս բարձրաձայնով ու դատապարտումը:

Ապա խօսք առաւ Գանատայի Ծերակոյտի անդամ Լէօ Հուսարոսը, որ բարեկամական վաղեմի կապեր ունի Կիւրախանի Հուսարոսին հետ: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հուսարոսի ազնիւ նկարագրին, արդարութեան եւ արդարագետութեան սկզբունքային իր հաւատարմութեան, խղճամտութեան եւ յատկապէս մարդկային իրաւունքներու պաշտպան հանդիսանալու երկարամեայ ուղիին: Էրեկեան անգամ մը եւս հաստատեց, թէ մեր համայնքը տարիներէ ի վեր ականատեսը դարձած է հայ ժողովուրդին հանդէպ Հուսարոսի անսասան կեցողութեան, մեր դատին հանդէպ իր գորակցութեան, ինչպէս նաեւ ամէն անգամ որ մեր համայնքը կարիքը կ'ունենայ իր ձայնը հասանելի դարձնելու, ան կը հանդիսանայ մեր խօսքի

թարգմանը՝ հրապարակաւ, Գանատայի Ծերակոյտի կամ Ծերակոյտի դահլիճներուն մէջ:

Անկէ ետք կոչով ունեցաւ Հուսարոս, եւ հաստատեց Գանատայի պետութեան տարիներու վրայ երկար դարձուցնելու Լէօ Հուսարոսի ու գանատահայ համայնքին հետ, ինչպէս նաեւ Հայոց Յեղափոխութեան ճանաչման գորակցութեան գծով: Ան անդրադարձաւ Արցախի շրջափակման եւ արցախահայրենիքի ենթարկուելուն եւ խստորէն դատապարտեց Գանատայի կառավարութեան կողմէ թուրքիոյ զինամթերք մատակարարելու արգելաւանջները որոշումն ու թուրքիոյ զինամթերքի վաճառման վերականգնումը: Այս առումով, ան պահանջեց, որ հաշուի կանչուին բոլոր մեղսակից կողմերը, որովհետեւ յանցագործութիւնները միշտ կրկնելի են, երբ կը մնան անպատիժ: Ծերակուտականի անդամ կոչուողը գանատահայ համայնքին, ինչպէս միշտ, նոյնպէս այսօր եւ պագային

աշխոյժ մասնակցութիւն բերելու եւ սատարելու Գանատայի հասարակական եւ քաղաքական կեանքի զանազան ոլորտներուն մէջ եւ աշխատակալ նաեւ սատարելու գանատահայ համայնքին մտահոգութիւններն ու պահանջները բարձրաձայնելու ամէնուրեք, ինչպէս նաեւ յայտնեց իր անշահախնդիր նուիրումը Հայ Դատին, արցախահայրենիքի իրաւունքներուն, Հայաստանի հետ բարեկամութեան սատարման՝ ի խնդիր արդարութեան եւ մարդկային իրաւանց հաստատման:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խորեն Տիմիթեան շնորհակալական խօսքով դրուատեց ծերակուտական Լէօ Հուսարոսի քաղաքական արդարապաշտ գործունէութիւնն ու գանատահայրենիքի զօրակցութիւնը եւ ծերակուտականի փոխանցեց Գանատայի Հայ Դատի յանձնախումբին կողմէ արժեւորման եւ երախտագիտութեան յուշատախտակ:

Միասը... Սկիզբը էջ 4

մար գերմանացիք տանհինգ հազար օրինակով «Կարմիր որմազգ»-ը տպագրեցին, ուր ցոյց կը տրուէր, որ գերմանացիներուն դէմ ոչ թէ Ֆրանսացիները, այլ օտարագրող ընկերներուն յիշատակը պիտի գիտնայ պատուել արժանավայել կերպով: Բարեկամներու օգնութեամբ, որոնք, վստահ եմ, որ պիտի չզլանան եւ պիտի ուզեն պատուել զիս, տպել կու տաս բանաստեղծութիւններս, որոնք արժանի են կարդացուելու: Եթէ կրնաս յիշատակներս տար Հայաստան: Քիչ յետոյ կը մեռնիմ 22 ընկերներու հետ, քաջութեամբ եւ հոգիի խաղաղութեամբ մարդու մը, որուն խիղճը հանգիստ է, որովհետեւ անհաստատ ոչ ոքի գէշութիւն չեմ ըրած եւ եթէ ըրած եմ, եղած է առանց ոյխի: Իրողը անոնց, որոնք ինձի գէշութիւն ըրած են կամ ուզած են ընել, բոլորին կը ներեմ, բացի այն անձէն, որ մեզի դաւաճանեց, իր մորթը վերագտնելու համար եւ անոնց, որոնք մեզ ծախեցին: Ուժգնորէն կը համբուրեմ քեզ, ինչպէս եւ բոլոր ընկերները, որոնք զիս կը ճանչնան հեռուէն կամ մօտէն, կուրծքիս կը սեղմեմ բոլորը, մնաք բարով»:

Միասը Գանատայի եւ ընկերները երեք ամիս շարունակ բանտին մէջ տանջանքներու ենթարկուեցան: Անոնց դատաւարութիւնը սկսաւ 17 փետրուար 1944-ին, Քոնիէրմանթալ հիւրանոցին մէջ եւ տեւեց երկու օր: Քսաներեք հերոսներն ալ մահուան դատապարտուեցան:

Մահապատիժի գործարդութենէն առաջ Միասը Գանատայի նամակ գրեց իր կնոջ. «Քանի մը ժամ ետք այլեւս այս աշխարհէն կը հեռանամ: Այսօր կէսօրէ ետք ժամը 3:00-ին պիտի գնդակահարուիմք: Չեմ հաւատար, այսուհանդերձ, գիտեմ, որ այլեւս քեզ պիտի չտեսնեմ: Ինչ կրնամ գրել քեզի, ամէն ինչ անորոջ է մէջս եւ պայծառ միաժամանակ: Ֆրանսայի ազատագրութեան բանակին մէջ մտած էի իրբեւ կա-

մաւոր զինուոր եւ կը մեռնիմ գաղափարիս համար: Երջանկութիւն անոնց, որոնք պիտի ապրին մեզմէ ետք եւ պիտի վայելեն վաղուան ազատութեան եւ խաղաղութեան անուշութիւնը: Վստահ եմ, որ Ֆրանսայի ժողովուրդը ազատութեան համար պայքարող ընկերներուն յիշատակը պիտի գիտնայ պատուել արժանավայել կերպով: Բարեկամներու օգնութեամբ, որոնք, վստահ եմ, որ պիտի չզլանան եւ պիտի ուզեն պատուել զիս, տպել կու տաս բանաստեղծութիւններս, որոնք արժանի են կարդացուելու: Եթէ կրնաս յիշատակներս տար Հայաստան: Քիչ յետոյ կը մեռնիմ 22 ընկերներու հետ, քաջութեամբ եւ հոգիի խաղաղութեամբ մարդու մը, որուն խիղճը հանգիստ է, որովհետեւ անհաստատ ոչ ոքի գէշութիւն չեմ ըրած եւ եթէ ըրած եմ, եղած է առանց ոյխի: Իրողը անոնց, որոնք ինձի գէշութիւն ըրած են կամ ուզած են ընել, բոլորին կը ներեմ, բացի այն անձէն, որ մեզի դաւաճանեց, իր մորթը վերագտնելու համար եւ անոնց, որոնք մեզ ծախեցին: Ուժգնորէն կը համբուրեմ քեզ, ինչպէս եւ բոլոր ընկերները, որոնք զիս կը ճանչնան հեռուէն կամ մօտէն, կուրծքիս կը սեղմեմ բոլորը, մնաք բարով»:

Միասը Գանատայի եւ իր քսաներկու ընկերները գնդակահարուեցան 21 փետրուար 1944-ին, Փարիզի արեւմտեան կողմը գտնուող Մոն-Վալերիէնի մէջ:

Միասը Գանատայի բանաստեղծութիւններու ժողովածուն լոյս տեսաւ 1947-ին, Փարիզի մէջ, եւ 1956-ին վերահրատարակուեցաւ Երեւանի մէջ:

Մեկինէ Մանուշեան 1947-ի ներգաղթին Հայաստան փոխադրուեցաւ, 1962-ին Ֆրանսա վերադարձաւ եւ մահացաւ 6 դեկտեմբեր 1989-ին, Փարիզի հարաւային Ֆլէորի-Մերժի աւանին մէջ:

ԱՍՊԵՏ ՄԱՆԺԻԿԵԱՆ

 <p>Pierre Halteh (514) 910-0833 (450) 682-0059 710 Bd. Curé-Labelle, Chomedey Laval, QC. H7V 2T9</p>	 <p>ALBERT ARKILANIAN IMMOBILIER REAL ESTATE aarkilanian@sutton.com www.albertarkilanian.com Cell: 514.962.8822</p>	 <p>Tro Bachekjian Représentant des ventes Véhicules d'occasion Pre-owned Sales Consultant tbachekjian@gabriel.ca Tél.: 514 327-7777 Poste: 4139 Téléc.: 514 262-8019 CONCESSIONNAIRE DE QUALITÉ</p>
 <p>(514) 995-6555 ayla.jewellery@hotmail.com 3678 Boulevard Saint-Martin O, Laval, QC H7T 1A8</p>	<p>X-LINE LOGISTCS 24/7 delivery services for seamless and secure shipments between Canada and the USA Special Events, Trade Shows, Inside Delivery, Same Day Delivery, White Glove Services, Warehousing Operation Manager Raffi Seviaan Tel: 514-968-3281, 514-554-8039, Email: dispatch@x-line.ca Montreal: 4425 Boul. Poirier, St-Laurent, Qc, H4R 2A4 Toronto: 1149 Kennedy Road, Scarborough, On, M1P 2K8</p>	 <p>ASSEMBLÉE NATIONALE DU QUÉBEC SONA LAKHOYAN OLIVIER DÉPUTÉE DE / MNA FOR CHOMÉDEY Sona.LakhoyanOlivier.CHOM@assembly.qc.ca 450-686-0166</p>
<p>Serge Keuroghlian Courtier Immobilier 514-892-5649 skeurghlian@sutton.com</p>  <p>Sutton groupe sutton - excellence inc. Agence immobilière 1555, boul. de l'Avenir bureau 100 Laval (Québec) H7S 0N5 B 450-662-3036 www.sergekeuroghlian.com</p>	<p>KRIKOR MAROUNIAN RLU Independent Financial Security Broker Life Insurance • Disability & Critical Illness Insurance Group Insurance • RRSP/TFSA/RESP Travel/Visitor Medical Insurance 11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 krikormar@gmail.com Res: (514) 332-7021 Fax: (514) 731-7499 Cell: (514) 927-2666</p>	 <p>Tél.: 514.315.9572 5995, boul. Gouin Ouest, #102 Montréal, QC. H4J 2P8 www.patissieriesamadi.ca / zakaria@patissieriesamadi.ca Tél.: 514.507.9573 595, boul. de la Côte-Vertu St-Laurent, QC. H4L 1X8</p>

Հայ Դատի Կեդրոնական խորհուրդը մշտապես խրախուսում է տարածաշրջանային եւ համահայկական բնոյթի գործակցութիւնները

«ԱԼԻՔ»-ը գրուցել է Հայ Դատի Կեդրոնական խորհրդի յատուկ ծրագրերի համակարգող Գեորգ Ղուկասեանի հետ:

— Պարոն Ղուկասեան օրեր առաջ Թեհրանում գումարուեց «Հայ Դատն այսօր» 15-րդ խորհրդա-ժողովը ընթացում տարբեր թեմաների մասին տեսակետներ հնչեցին, խորհրդաժողովը յատուկ անդրադարձ կատարեց Հայկական հարցին, Արցախում Յեղասպանութեան խնդրին, Հայկական Սփիւռքի անկախութեան եւ այլ թեմաների: Այս հարցազրոյցի ընթացում կը փորձեմ խորհրդաժողովին արժարձուած հարցերն ուղղել նաեւ Ձեզ, բայց նախ անդրադառնամ Հայ Դատի Կեդրոնական խորհրդի աշխատանքների վերջին նորութիւններին:

— Արցախում կատարուող գործողութիւնները իրենց բնոյթով Յեղասպանական գործողութիւններ էին եւ այդ ուղղութեամբ միջազգային հնչեղութիւն ապահովելու աշխատանքները սկսել են դեռեւս 2023 թուականի Օգոստոսից, երբ որ Միջազգային քրէական դատարանի առաջին գլխաւոր դատախազը հրապարակեց իր յայտնի գեղոյցը դրանից յետոյ որոշակի քննարկումներ տեղի ունեցաւ ՄԱԿ-ի կեդրոնակայանում:

Այսինքն այս ամբողջ քննարկումների էութիւնը յանգում էր այն եզրակացութեան, որ համաձայն 1948 թուականի Յեղասպանութեան կանխարգելման եւ պատժի մասին կոնուենցիայի Արցախում Ատրպէյձանի իրականացնող քայլերն իր բնոյթով Յեղասպանական գործողութիւն են: Արդէն 2023 թուականի Սեպտեմբերեան հարաբաւորի իրադարձութիւններից յետոյ, երբ որ նաեւ այդ ամբողջ յանցագործութիւնների մասին էր բարձրաձայնուած:

Անհրաժեշտ է շեշտել, որ Հայ Դատի համակարգում գործուած է հայկական իրաւական կեդրոն անունը կրող կազմակերպութիւն: Տարիներ շարունակ այն տեղակայուած է ԱՄՆ-ում եւ Հայ Դատի աշխատանքներին առնչուող իրաւաբանական խնդիրների շուրջ Հայ Դատի յանձնախմբերը եւ գրասենեակները խորհրդակցուած են Հայ իրաւական կեդրոնի հետ: Նաեւ Հայ իրաւական կեդրոնը իր կողմից ինքնուրոյն աշխատանքներ է ձեռնարկուած, որոնց մեծ մասը նաեւ վերաբերում են Հայ ռազմագերիների ազատ արձակման հարցին: Բայց գալով քննարկուող նիւթին 2022-2023 թուականների ընթացքին Հայ իրաւական կեդրոնը գործուն մասնակցութիւն է ունեցել ՄԱԿ-ի կողմից Ատրպէյձանի ՈԱՊ գործընթացին, որտեղ ՄԱԿ-ի անդամ պետութիւնները չորս տարի մէկ անգամ անցնում են մարդու իրաւունքների իրավիճակի գնահատման ընթացակարգերով նախատեսուած գործողութիւնները, որպէսզի այլ կազմակերպութիւններ եւս կարողանան մասնակցութիւն ունենայ այդ գործընթացին եւ Հայ իրաւական կեդրոնը մոբիլիզացրեց Հայ Դատի յանձնախմբերի եւ գրասենեակների ռեսուրսը, այդ թւում՝ Հայ Դատի կեդրոնական գրասենեակները մասնակցեցին այդ աշխատանքներին եւ Ատրպէյձանի ՈԱՊ տեքստում մեր կողմից մատչանշուած խնդիրների մի մասը, որոնք վերաբերում են Ատրպէյձանի կողմից մարդու իրաւունքների խախտումներին կարելի է հաշուի առնել:

Սա խնդրի զուտ իրաւական կողմն է եւ այս առումով աշխատանքները եւս շարունակելու են կատարուածը որպէս Յեղասպանութիւն ներկայացնելու համար, որովհետեւ Յեղասպանութեան յանցագործութեան կանխարգելման եւ պատժի մասին կոնուենցիայի երկրորդ յօդուածով նախատեսուած կարգով, կատարուածը ամբողջովին համապատասխանում է Յեղասպանութեան յանցագործութեան բնորոշումին:

Գալով արդէն քաղաքական աշխատանքներին, 2020 թուականից մինչ այժմ Հայ Դատի յանձնախմբերը եւ գրասենեակները ստիպուած են լինում պարբերաբար վերանայել իրենց առջեւ դրուած մարտավարական խնդիրները եւ այդ մարտավարական խնդիրները եւ քաղաքական առաջնահերթութիւնները համապատասխանեցնել ստեղծուած աղէտալի իրավիճակին: Մենք խնդրն ունենք նաեւ Ատրպէյձանի նկատմամբ համապատասխան պատժամիջոցների կիրառման ապահովմանը: Եթէ մենք խօսում ենք ԱՄՆ-ի պարագային այն եւրոմիութեան նախատեսուած թիրախային պատժամիջոցների կատարումն է: Այսինքն պատժամիջոցների կիրառման հարցը քաղաքական օրակարգ բերելը եւ անդամ 27 պետութեան հաստատումը:

Գոնէ մեզ յաջողուել է պատժամիջոցների հարցը բերել քաղաքական դիսկուրսի մակարդակ նոյն իրավիճակն է ամերիկեան կոնգրեսում, որտեղ այսօր ներկայացուել է մի քանի բանաձեւեր, որոնք ամերիկեան վարչակազմին պահանջում են գլոբալ պատժամիջոցներ կիրառել:

Այն, որ Ատրպէյձանը Արցախում իրականացրել է Յեղասպանութիւն դա միանշանակ է: Բայց խնդիրը Հայ Դատի յանձնախմբերի առջեւ այդ Յեղասպանութեան համար Ատրպէյձանի նկատմամբ պատժամիջոցների հարցը օրակարգ բերելն է:

— Պարոն Ղուկասեան, Եւրոպայում, ԱՄՆ-ում, Գանատայում Հայ Դատի յանձնախմբերի աշխատանքները բնականաբար տարբեր են Մերձաւոր Արեւելու գտնուող կառոյցների աշխատանքից: Արդեօք կառոյցները եւ Հայ Դատի յանձնախմբերը աշխատում են որպէս ոչ պետական կազմակերպութիւններ՝ աւելի անկախ, թե՞ ուղղորդուած աշխատանք են իրականացնում:

— Հայ Դատի Կեդրոնական գրասենեակը օգնում է Հայ Դատի յանձնախմբերին եւ գրասենեակներին եւ ընդհանրապէս բոլոր աշխատանքներով, որոնցով Հայ Դատի կեդրոնական գրասենեակը կարող է օժանդակութիւն ցուցաբերել՝ տեղեկատուութիւն, վերլուծութիւն եւ այլն, բայց Հայ Դատի կեդրոնական գրասենեակի կեդրոնական խորհուրդը Հայ Դատի յանձնախմբերի աշխատանքները չեն ուղղորդում, Հայ Դատի իւրաքանչիւր յանձնախումբը աշխատում է սուեւել երկրի օրէնսդրաիրաւական ամբողջ համակարգին համահունչ, որպէս այդ երկրներում գրանցուած եւ աշխատող քաղաքացիական հասարակութեան կազմակերպութիւններ: Հայկական Սփիւռքի էթնիկ լաբորատորիան կառոյցները հիմա կախուած երկրի քաղաքական մշակոյթին եւ օրէնսդրաիրաւական հնարաւորութիւններին, նրանց աշխատանքը պէտք է ներկայացնել այս տրամաբանութեան ներքոյ եւ կախուած երկրի քաղաքական մշակոյթին եւ օրէնսդրաիրաւական հնարաւորութիւններին, որոնք տրուած են քաղաքացիական հասարակութեանը էթնիկ լաբորատորիան կառոյցներին Հայ Դատի յանձնախմբերը եւ գրասենեակները ունեն գործունէութեան տարբեր մեթոդներ գործիքակազմեր, քաղաքական առաջնահերթութիւններ: Բնականաբար մենք չենք կարող համեմատել ամերիկեան քաղաքական միջավայրը գանատական եւ մերձաւորարեւելեան քաղաքական միջավայրի հետ, որովհետեւ նոյն դէպքում էթնիկ լաբորիները քաղաքական մշակոյթի ուրոյն մասն է, որոնք ամբողջում եւ պաշտպանուած են օրէնսդրութեամբ, միւս դէպքում էթնիկ լաբորիները քաղաքական մշակոյթի ուրոյն մասն է: Ըստ այդմ Մերձաւոր Արեւելքի երկրներում Հայ Դատի յանձնախմբերը եւ գրասենեակները առաւելապէս կատարում են իրազեկման աշխատանքներ տարբեր շրջանակներին Հայկական հարցի մասին իրազեկելու համար: Այսինքն աշխատանքի բնոյթը յաճախ կախուած է լինում այն երկրների քաղաքական մշակոյթին որտեղ Հայ Դատի յանձնախմբերը եւ գրասենեակները գործում են:

— Հայաստանի ներքաղաքական իրավիճակի մասին ուղղութիւն որդեգրում էք, թե՞ այնուամենայնիւ, փորձում էք քաղաքական հարցով ունենալ միասնական դիրքորոշում:

— Հայ Դատի յանձնախմբերի եւ գրասենեակների քաղաքական առաջնահերթութիւնները եւ քաղաքական դիրքորոշումները պայմանաւորուած չեն Հայաստանի իշխանութիւնների քաղաքական դիրքորոշումների հետ: Հայ Դատի յանձնախումբը այս տարի նշում է իր հիմնադրման 80-ամեակը եւ 80 տարիների ընթացքում Հայ Դատի ցանցը ունեցել է ճշգրտած քաղաքական ուղեգիծ եւ գործունէութեան առաջնահերթութիւններ: Այլ հարց է, որ Հայաստանի ներկայ իշխանութիւնների այս աղէտալի գործունէութեան արդիւնքում ստեղծուել է մի իրավիճակ, որ Հայ Դատի յանձնախմբերը եւ գրասենեակները իրենք ստիպուած են իրենց դիրքորոշումները մարտավարական վերանայման ենթարկել, եւ համապատասխանեցնել ներկայ իրավիճակին: Այսինքն Հայաստանի իշխանութիւնը ունի իր դիրքորոշումը Հայ Դատի յանձնախմբերը եւ գրասենեակները ունեն իրենց քննարկումների արդիւնքում ճշգրտած դիրքորոշումները եւ այդ ուղղութեամբ շարունակում են աշխատանքները:

րունակում են աշխատանքները:

Մէկ այլ հարց է, որ ՀՀ-ի իշխանութիւնների դիրքորոշումները էականօրէն խանգարում են Հայ Դատի աշխատանքներին: Օրինակ 2022 թուականին երբ Յրանսայի սենատը ընդունում է բանաձեւ, որով Յրանսայի գործադիր իշխանութեանը յորդորում է ճանաչել Արցախի Հանրապետութեան անկախութիւնը Յրանսայի գործադիր իշխանութիւնը յայտարարեց, որ դուք գործադիր իշխանութիւնից պահանջում էք մի բան, որ Հայաստանի գործընկերները մեզանից չեն պահանջում: Այսինքն որոշակի դիտարկում (երկճիւղաւորում) կայ ՀՀ-ի իշխանութիւնների դիրքորոշումների եւ Հայ Դատի քաղաքական առաջնահերթութիւնների միջեւ: Բայց դա չի նշանակում, որ Հայ Դատի ցանցը պէտք է հրաժարուի քաղաքական առաջնահերթութիւններից:

— Արդեօք կեդրոնական գրասենեակները փորձում են միմեանց հետ յարաբերութիւններ ունենալ եւ տարբեր գրասենեակների հետ համատեղ նախաձեռնութիւններով հանդէս գալ:

— Տարածաշրջանային եւ համահայկական բնոյթի համագործակցութիւնները մշտապէս կատարուել են: Օրինակ Հոկտեմբերի տեղի ունեցաւ Ուաշինգթոնում Հայ Դատի Գանատայի, Ամերիկայի, Աւստրալիայի եւ Հարաւային Ամերիկայի եւ կեդրոնական գրասենեակի խորհրդաժողով, որտեղ քննարկուեցին Հայ Դատի քաղաքական առաջնահերթութիւններին վերաբերող հարցեր:

— Սփիւռքի գոյութիւնը եւ լիցիւթիւնը շարժառիւթ է Հայ Դատի յանձնախմբերի գոյութեան նպատակների հետ: Այսինքն Սփիւռքի համար կարճաժամ է Հայոց Յեղասպանութիւնը, հայ-թուրքական յարաբերութիւնները: Ներկայ քաղաքական համաշխարհային իրավիճակը նաեւ նկատի առնելով, պարզ է, որ կուսակցութիւնների նկատմամբ հետաքրքրութիւնը պակաս է, միջուկը յատկապէս ՀՅԴ-ն է: Այնուամենայնիւ իրականացնում է Հայոց Յեղասպանութեան ուղղութեամբ: Հայ Դատի յանձնախմբերը ինչպէ՞ս են փորձում Հայկական հարցը աշխարհում դարձնել հիմնական օրակարգ:

— Հայ Դատի յանձնախմբերը Սփիւռքում ունեն համախմբելու, էթնիկ լաբորատորիան կառոյցների գործառոյթը, էթնո-պաշտպան գործառոյթ: Մեր շատ յանձնախմբեր ունեն համայնքային տարբեր ծրագրեր, օրինակ Հայ Դատի շատ յանձնախմբեր համայնքային բազմաթիւ ծրագրեր են իրականացնում:

Եւրոպայի Հայ Դատի գրասենեակը ունէր Վահան Յովհաննիսեան վարժողական ծրագիրը, որում Մերձաւոր Արեւելքում փորձ է կատարուում եւս նման ծրագրեր իրականացնել: Համայնքն է, որ մեր Հայ Դատի յանձնախմբերին պատուիրում է աշխատանք կատարել եւ իրենց ձայնը, իրենց կողմից ընտրուած պաշտօնեաների մօտ լսելի դարձնել: Հետեւաբար Հայ Դատի յանձնախմբերը աշխատում են համայնքին համահունչ:

— Թուլայնացման, արհեստական բանականութեան գերիշխման ժամանակաշրջանում ինչպէ՞ս է արդիականացում Հայ Դատի յանձնախմբերի գործունէութիւնը, համապատասխան եւ համաչափ արձագանգելու ժամանակի մարտահրաւէրներին:

— Յատուկ ռազմավարութիւն չկայ, որ մենք արհեստական բանականութեամբ փորձում ենք էթնիկ լաբորիները վարզացնել: Բայց արհեստական բանականութիւնից մի փոքր աւելի յետ, բայց յետ արդիւնաբերութեան յեղափոխութեամբ պայմանաւորուած տեխնոլոգիաներ օգտագործում ենք: Օրինակ՝ տարբեր մէջ-լինդ համակարգերով մարդկանց հետ կապի մէջ մնալով, սոցիալական մեդիայում կայքերում եւ այլն:

Ներկայ ժամանակաշրջանի ընձեռած հնարաւորութիւնները մեզ թոյլ են տալիս կապը յանձնախմբերի միջեւ ամուր պահել: Այդ առումով աշխատանքային յարաբերութիւնները շահում են: Բայց Հայ Դատի լայն համակարգում մշտապէս խրախուսուած է միջանձնային շփումները եւ պարբերաբար հանդիպումներ է անցկացուում:

Հարցազրոյցը՝ ՍԻԻՆԷ ՖԱՐՄԱՆԵԱՆԻ





ԼՈՒՍԱՄԻՈՐԻԶ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Է. ՏԱՐԻ, ԹԻՎ 4, Մարտ 2024



«ԹԱՔՆՈՒԱԾ» ՄԵՂՔԻ ՓՆՏՈՏՈՒՔ...

Դարերէ ի վեր Մեծ Պահոց շրջանը դիտուած է, որպէս ինքնաքննութեան շրջան, մեր սրտերը քննելու եւ փնտռելու ու մանաւանդ նշմարելու այնտեղ բոյն դրած «թաքնուած» մեղքը, որ պատճառ եղած է Աստուծոյ բարկութեան ու դատաստանին:

Որքանով գիտակից ենք անդրադառնալու, որ մեր մեծ ու փոքր, երեւելի կամ թաքուն մեղքերուն պատճառով է, որ Աստուածորդին աշխարհ եկաւ եւ մեզի համար տառապեցաւ ու խաչ բարձրացաւ:

Այս ճշմարտութիւնը գիտնալով արդեօք պէտք է շարունակել մեղքի գերին դառնալ, անհնազանդ մնալով Աստուածային պատուիրաններուն ու չփոխել մեր թաքուն մեղանշումի ուղին:

Նայինք այսօրուան աշխարհին ու կը տեսնենք տագնապով ու նեղութեամբ լեցուն աշխարհ մը: Ինչո՞ւ: Որովհետեւ մարդը տագնապի մէջ է: Գիտնալով հանդերձ ճշմարտութիւնը, որ մեր Տէրը մեր յանցանքներուն եւ անօրէնութիւններուն համար խոցուեցաւ ու չարչարուեցաւ, մեր պատիժը Իր ուսերուն վրայ վերցուց եւ փոխարէնը՝ խաղաղութիւն տուաւ մեզի բժշկելով մեր բոլոր վերքերը: Սակայն այս բոլորով հանդերձ, մարդը կը շարունակէ հեռու մնալ Աստուծմէ, Աստուծոյ ներկայութենէն եւ փրկութեան ճանապարհէն քալելու ուրախութենէն:

Այո, աշխարհը նեղութեան մէջ է այսօր, որովհետեւ մարդը անելի կը գիտակցի, թէ ինչպէս բարոյականութեան անկումը, տնտեսական տագնապը, անհանդուրժողութիւնը, բամբասանքը, նենգութիւնը եւ կամ ատելութիւնը կը վիրատրեն ու կը նեղացնեն, քան անդրադարձը ունենալ, թէ՛ մեղքը կը վիրատրէ ու կը բարկացնէ Աստուծոյ:

Փոխանակ մեր ամբողջական համակ սերը մեր Արարիչին տաճելու, մեղքը անելի շատ կը սիրենք եւ կամ կը նախնարենք: Արդեօք ունինք ուրախութիւնը եւ վայելքը մեզի տրուած բարիքներուն, մեծ արուեստի մը պատկերին մէջէն դիտուած գեղեցկութիւնը տիեզերքի հրաշքին, բոլոր ստեղծուածներուն եւ արարածներուն: Չենք տեսներ եւ կամ յաճախ չենք ուզեր տեսնել «ՄԵԾ ՊԱՏԿԵՐԻ» Հեղինակին՝ Արուեստագէտին, փնտռելու, առաւել ճանչնալու եւ մանաւանդ երախտապարտ ըլլալու: Ընդհակառակն, հեռու կը մնանք Արարիչէն ու մեզի համար նոր «աստուածներ» կը փնտռենք, անոնց գերին դառնալու ու երկրպագելու: Անելի շատ մեղքը կը սիրենք, մանաւանդ «թաքնուած» մեղքը, որ մեզ կ'առաջնորդէ դէպի կործանում եւ ապա Աստուծոյ բարկութեան ու դատաստանին:

Երբ գայ օրը եւ մենք դատաստանի ճաղաւանդակին առջեւ կանգնինք, քաջ գիտնանք որ այնտեղ կողմնակալութիւն եւ կաշառակերութիւն եւ կամ սիրելիի մը ընտրութիւն չկայ, այլ կայ միայն արդար դատաստան ըստ մեր գործերուն եւ ապրելակերպին:

Հետեւաբար մեծ պահոց շրջանը առիթը կու տայ մեզի քննելու ինքներս մեզ, քննելու մեր սրտերուն մէջ բոյն հաստատած «թաքնուած» մեղքերը ու հեռու մնալու, ձերբազատուելու անոնցմէ եւ հնազանդելու Աստուծոյ պատուիրաններուն:

Ահաւասիկ այսպիսին է մասնակցութիւնը հոգեւոր ճամբորդութեան մը՝ որ կը կոչուի ՄԵԾ ՊԱՇՔ:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ

ՅՈՅՍԸ՝ ԽԱՐԻՍԻՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳԻԻ

Յոյսը միայն փափաք, կամ լուսատեսութեան զգացումը չէ, այլեւ մարդ արարածի հաւատքի համար կարեւորագոյն ազդակ է, որ դժուարութեանց ժամանակ, մեզ խարսխուած ու ամրացած կը պահէ, իսկ յուսահատութեան ժամանակ, կը զօրացնէ:

ՅՈՅՍԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Յոյսը պարզապէս Աստուծմէ խոստումներ ակնկալելու զգացումը չէ, այլեւ այն վստահութիւնն է, որ Աստուած հաւատարիմ է, նոյնիսկ եթէ երբեմն մենք, որպէս մարդ արարած անհաւատարիմ ըլլանք: Պողոս Առաքեալ իր Եբրայեցիներուն ուղղած նամակին մէջ կը յիշեցնէ մեզի, որ «Յոյսը մեր խարխիսն է, ապահով եւ անշարժ» (Եբր 6.19): Յոյսը մեր խարխիսն է՝ ամրացած Աստուծոյ մեզի հանդէպ ունեցած անշահախնդիր սիրոյն մէջ:

ՅՈՅՍ՝ ՏԱԳՆԱԴԻ ՈՒ ՆԵՂՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

Փորձութեանց եւ դժուարութեանց ժամանակ, յոյսը կը դառնայ մեր կեանքի ուղեցոյցը: Երբ դէմ յանդիման կը գտնուինք մարտիրաւէրներու, որոնց դիմաց մենք զմեզ պարտուած կը զգանք, յոյսը մեր հոգոյն կը փսփսայ, որ Աստուած տակաւին մեր կողքին է, եւ որ «Աստուած բարիին համար գործակից կ'ըլլայ անոնց՝ որոնք կը սիրեն զինք եւ իր ծրագրին համաձայն իրեն կանչուած են» (Հռ 8.28): Նոյնիսկ եթէ փոթորիկները մեր շուրջ ըլլան, յոյսը կը զօրացնէ մեր սիրտերը եւ կը յիշեցնէ մեզի, որ իրաբանաչիւր խաւարացած գիշերին կը յաջորդէ նոր արշալոյսը:

ՅՈՅՍ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Յոյսի աղբիւրը Յիսուս Քրիստոսի մէջ է: Ինքն է յոյսի մարմնացումը, Աստուծոյ խոստումներուն կատարումը, որ մարդացաւ՝ փրկելու մարդկութիւնը մահուան ու մեղքի տիրմէն: Իր մահուամբ ու յարութեամբ, Քրիստոս մեզի ապահովեց կենդանի յոյսը. ժառանգութիւն մը, որ չի կորսուիր, չի խանգարուիր, չի թառամիր: Յիսուս Քրիստոսով, մենք կը գտնենք փրկութեան յոյսը, բժշկուելու յոյսը, յաւիտենականութիւնը ժառանգելու յոյսը:

ՅՈՅՍԸ ՄՇԱԿԵԼՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Յոյսը Աստուծոյ պարգէնն է մարդուն, սակայն մենք մեր կարգին պարտաւորութիւններ ունինք, այդ յոյսը սնուցանելու եւ մշակելու մեր կեանքերուն մէջ: Մեր յոյսը Կը մշակենք՝ աղօթքով, Աստուծոյ խօսքին ուսուցմամբ եւ մասնակցելով Սուրբ Պատարագի խորհուրդին: Երբ մեր աչքերը սեւեռենք Յիսուս Քրիստոսի, կը տեսնենք իր հաւատարմութիւնը, եւ այդ մէկը միջոց կը դառնայ՝ պահելու մեր յոյսը, նոյնիսկ ամէնէն դժուարին պահուն:

Հետեւաբար, վստահինք Աստուծոյ, այն յոյսով, որ Աստուած, երբ այդ բարի գործը սկսաւ մեր մէջ, գայն իր կատարումին պիտի հասցնէ (Փլպ 1.6): Այն հաւատքով, որ յոյսի պարգեւիչ Աստուածը մեզ ամբողջական ուրախութեամբ եւ խաղաղութեամբ պիտի լեցնէ՝ իրեն հանդէպ ունեցած մեր հաւատքով, որպէսզի՝ Սուրբ Հոգիին զօրութեամբ, յոյսով առատանաք բոլորս, որ իրեն հաւատացինք, սիրեցինք գայն եւ իրմով առաջնորդուեցանք (Հռ 15.13):

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՄԱՐ

«ՆՈՅՆԻՍԿ ԵՐԲՈՐ ՄԱՀԱՍՏՈՒԵՐ ԶՈՐԵՐԷ Կ'ԱՆՅՆԻՄ, ՉԱՐԻՔԷ ՄԸ ՉԵՄ ՎԱԽՆԱՐ, ՏԷՐ, ՔԱՆԻ ԴՈՒՆ ԻՄ ՀԵՏՍ ԵՍ: ՔԱՆԻ ՅՈՒՊԴ ԶԻՍ Կ'ԱՌԱՋՆՈՐԴԷ ԵՒ ԳԱԽԱԶԱՆԴ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ: ԵՍ ԻՆՔԶԻՆՔՍ ԱՊԱՀՈՎ ԿԸ ԶԳԱՄ» (Սաղմոս 23.4):

“EVEN IF I GO THROUGH THE DEEPEST DARKNESS, I WILL NOT BE AFRAID, LORD, FOR YOU ARE WITH ME. YOUR SHEPHERD'S ROD AND STAFF PROTECT ME.” (Psalms 23:4)





ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՄԻՆ

ՄԻՐՈՒԹԻՒՆ ՈՒ ԱՆԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ
(ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ)
(ԲԱԺԻՆ Ա.)

«Այս քարոզը մանրամասնորեն կը սորվեցնէ, թէ սրբութեամբ, անարարութեամբ եւ մաքրութեամբ հոգին ինչպէս պէտք է ձգտի դէպի իր Տէրը, այսինքն՝ դէպի աշխարհի փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Քարոզը նաեւ յարութեան արքան մարմիններու պարզած վիճակին, չարին, ազար կամքին եւ մարդկային բնութեան ու պապիւնի մասին կարգ մը շինիչ խօսքեր կը բովանդակէ»:

Քրիստոսի հաւատացեալին (հոգին) հետ նշանուիլը

1.- Մեծահարուստ թագաւոր մը աղքատ աղջկան մը կը սիրահարուի եւ կ'ուզէ զայն իրեն կին առնել: Եթէ աղջիկը իր ամուսնոյն նկատմամբ կատարեալ ազնուութիւն ցուցաբերէ եւ իր ամբողջ սէրը անոր յատկացնէ, ապա այդ աղքատ եւ խեղճ կինը, որ ոչինչ ունէր, իր ամուսինին ամբողջ ունեցուածքին տէրը կը դառնայ: Բայց եթէ ան իրմէ ակնկալուած պարտաւորութիւններուն եւ պատասխանատուութիւններուն հակառակ վերաբերմունք ցուցաբերէ եւ իր ամուսինին տան նկատմամբ անյարիր կենցաղ որդեգրէ, ապա գլուխը ձեռքերուն մէջ պահած՝ անարգալի եւ անօթալի վիճակով դուրս կը վտարուի Հին Կտակարանի մէջ բրեւ խորհրդանիշ ներկայացուող այն կնոջ նման, որ իր ունեցած ամբողջ հարստութենէն, փառքէն ու պատիւէն կը մերկանայ, իր անվայել ու յիմար կենցաղին պատճառով:

Երկնաւոր փեսային՝ Քրիստոսի հետ նշանուած հոգիին պարտականութիւնը

2.- Նոյն ձեւով ալ ան հոգին, զոր Քրիստոս, աստուածային խորհրդաւոր կողակցութեան համար իրեն կը նշանէ, եւ որ կը ճաշակէ երկնաւոր հարստութիւնը, անհրաժեշտ է, որ ամենայն հաւատարմութեամբ եւ աշխատասիրութեամբ հաճեցնէ իր սիրեցեալը՝ Քրիստոսը եւ կատարէ այն՝ ինչ որ իր պարտականութիւնն է (հոգիի ծառայութիւն) եւ իրեն վայել է: Ամէն պարտականութեան մէջ ան պէտք է աշխատի զԱստուած հաճեցնելու որեւէ ատեն չտրտմեցնել Սուրբ Հոգին եւ պահել իրմէ ակնկալուած խոնարհութիւնն ու սէրը: Եւ երկնաւոր Թագաւորին տան մէջ պարտի իր բարի ընթացքը շարունակել ամենայն ազնուութեամբ եւ երախտագիտութեամբ այն շնորհքին համար, որ իրեն տրուեցաւ: Այդպիսին Տիրոջ բարիքներուն վրայ տիրուի ի իշխանուի կը դառնայ եւ, անելին՝ Անոր աստուածութեան փառքին կը տիրանայ: Բայց եթէ ինչայ եւ հակառակ ուղղութեամբ ընթանալով՝ թերանայ իր պարտականութեան ու ծառայութեան մէջ, եթէ Տիրոջ հաճելի բաները չկատարէ, չհնազանդի անոր կամքին եւ չգործակցի իր մէջ ներկայ եղող Հոգիի շնորհքին հետ, այն ատեն կը զրկուի իր պատիւէն եւ անօթալի ու անարգալի

Մեծն Սուրբ Մակար
(Շարունակելի 1)



ՆԱՅՈՒԱԾՔԸ

«Հայեցաւ Տէր ի Պետրոս...
(եւ Պետրոս) ելաց դառնապէս»
(Ղկ. 22:61-62)

Քանի անգամ որ նայեցար եթերին՝
Ուսկից փայլակ մը սահեցաւ շեշտակի՝
Քեզի հետ են ալ դիտեցի այդ վերին
Անկումն անսրգ հրեշտակի:

Քանի անգամ որ նայեցար արեւուն՝
Թափած ատեն սարերն ի վար իր ոսկին,
Քեզի հետ են ալ զարթումով մը զուարթուն
Դիտեցի էջքը կեանքին:

Քանի անգամ որ նայեցար ամպերուն՝
Կապոյտն եղծող այդ նախանձին չարաշուք,
Քեզի հետ են ալ զայրուցքով սեւեռուն՝
Նրզովեցի սենն ու սուգ:

Քանի անգամ որ նայեցար խաժ ծովուն՝
Աղի շիթով խըտացած մե՛ծ ծիծաղին,
Քեզի հետ են ալ ծաղրեցի վըրդովուն
Հըրճուանքն ու նննգը խաղին:

Քանի անգամ որ նայեցար թըռչնիկին՝
Ամայութիւնն հեգնող ձայնին այդ թրթռուն,
Քեզի հետ են ալ միտ դըրի կաթոգին
Այն երկնային երգերուն:

Քանի անգամ որ նայեցար ծաղկին պերճ՝
Լոյսով կըկուած այդ անհիսկէն նըկարին,
Քեզի հետ են ալ զմայլումով մը անվերջ
Ըզգացի բոյուն ու բարին:

Քանի անգամ որ նայեցար հէք մարդուն՝
Հիւանդ՝ աղքատ մարդուն մեղքի բեռնաւոր,
Քեզի հետ են ալ կարեկից եւ արթուն
Զըննեցի վէրքը անոր:

Քանի անգամ որ նայեցար վայրահակ
Խորն այն գութին՝ ուր զըլորած էր հոգին,
Քեզի հետ են ալ սուզեցի համարձակ
Ունայնութիւնն հաճոյքին:

Ու ընդ երկար այսպէս անխռով ու անվիշտ՝
Եթեր՝ արեւ՝ ամպ՝ ծով՝ թըռչուն ու ծաղիկ,
Մարդն ու հոգին կը դիտէի Քեզմով միշտ.
Օր մ'ալ դարձար ինձ լըռիկ...

Ինչ պակուցիչ բան մը կար մէջն աչքերուդ
Որ երբ նայուածքդ ինձ ուղղեցիր՝ լացի ես...
Կամ թաքնուած ինչ կար սըրտիս խորը մութ
Որ զըղջացի դառնապէս:

ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ

ԱՌԱԿՍ ԶԻՆՉ ՑՈՒՑԱՆԷ...

ՍԻՐԱՄԱՐԳԻՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

Սիրամարզը իր գեղեցկութիւնը կը ցուցադրէ բոլորին, որոնց կողմէ գովասանքի արժանանալով կը խորհի թագաւոր ըլլալ: Իմաստուններէն ոմանք կը խրատեն զինք թէ խաբուսիկ բաներէ պէտք չէ տարուիլ, որովհետեւ թագաւորութիւնը տոհմային է: Սիրամարզը մտիկ չ'ընէր:

Թոչուններուն թագաւորը ասիկա լսելով, կու գայ, կը հարուածէ սիրամարզի գաւակներն ու ազգատոհմը ամբողջ: Շատեր անոր թելերն ու փետուրները քաշելով կը մերկացնեն զայն: Այսպիսով, ան ո՛չ միայն թագաւորութեան չի հասնիր այլեւ գեղեցկութիւնը վրայ կու տայ:

Առակիս համաձայն, շարեր փոքր յաջողութեամբ մը կը խորհին թագաւոր ըլլալ. խորհրդաւորներու խօսքերէն հրապուրուած, յուսահարած կը կործանին, եւ չեն հասնիր իրենց նպատակին:

ՄԻԽԻԹԱՐ ԳՕՇ

ՅԻՍՈՒՍ ԿԸ ԲԱԶՄԱՏՆԷ ՀԱՅԵՐԸ

Օրէ օր Յիսուսի հետետորդներուն թիւը կը բազմանար: Օր մը, շուրջ հինգ հազար մարդ հաւաքուած էր Յիսուսի շուրջ՝ ուրախութեամբ անոր ըսածները լսելու:

Անոնք նոյնիսկ մոռցան, թէ արդէն շատ ուշ էր:

Աշակերտները Յիսուսին ըսին.

- Արդէն ուշ է, թող մարդիկ իրենց տուները երթան, անոնք արդէն անօթի են:

Յիսուս անոնց ըսաւ.

- Եթէ անօթի են, ուրեմն մենք կը կերակրենք զիրենք:

Աշակերտները զարմացան, այսքան մարդ ինչպէս կրնային կերակրել, իրենց մօտ այդքան հաց չունէին: Պատանիի մը քովէն հինգ հատ հաց եւ երկու ձուկ բերին: Յիսուս վերցուց հացերն ու ձուկերը, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ, ապա հացերն ու ձուկերը տուաւ աշակերտներուն, զորս ժողովուրդին տալու ժամանակ շատ զարմացան, որովհետեւ ինչքան կը բաժնէին, հացերն ու ձուկերը այնքան կը բազմանային:

Մարդիկ կշտացան եւ ուրախութեամբ տուն վերադարձան:

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ ԱՇԱԿԵՐՏԻՆ
ԳՐՔՈՅԿԸ





ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

ԻՆՉ Է ՊԱՏԱՐԱԳԸ:

Պատարագ կը նշանակէ՝ Աստուծոյ մատուցուած ընծայ, նուրբ կամ զոհ: Հին ժամանակ պատարագ կը մատուցանէին կենդանիներ մորթելով. անոնց արիւնը թափելէ ետք, զանոնք զոհասեղանի վրայ կը դնէին ու այրելով Աստուծոյ կը նուիրէին՝ զոհաբանութեան եւ մեղքերու քաւութեան համար: Նաեւ կը մատուցանէին անուշահոտ խունկի, հացի, գինիի, ձէթի ու երկրի բերքէն զանազան ընծաներ:

Քրիստոսի գալուստով դադարեցաւ կենդանիներու զոհագործութիւնը, որովհետեւ Քրիստոս աշխարհի մեղքը իր վրան առնելով պատարագութեամբ հաչին վրայ եւ իր սուրբ արիւնը թափելով մտաւ երկնքի սրբարանը ու քաւութիւն ըրաւ: Հայր Աստուած ընդունեց իր Որդւոյն միջնորդութիւնը եւ Անոր Արեան հեղումովը նոր Ուխտ մը հաստատեց համայն աշխարհի համար. խոստացաւ որդեգրութիւն շնորհել եւ դրախտին դուռը բանալ բոլոր անոնց, որոնք կը մկրտուին Հօր, Որդւոյն եւ Ս. Հոգւոյն անունով ու կը խոստանային պահել Իր պատուիրանները:

ԻՆՉ Է ԱՆԱՐԻԻՆ ՊԱՏԱՐԱԳԸ ԵՒ Ո՛Վ ՀԱՍՏԱՏԵՑ ԶԱՅՆ:

Անարին Պատարագը Սուրբ Հաղորդութեան Խորհուրդի արարողութիւնն է, զոր հաստատեց Քրիստոս, Վերնասան մէջ, Վերջին Ընթրիքի ընթացքին:

Անարին պատարագը, ընծան կամ զոհը յիշատակութիւնն ու շարունակութիւնն է Գողգոթայի վրայ Յիսուսի կատարած Փրկագործութեան խորհուրդին: Այս արարողութեան ընթացքին կարողացուող աղօթքներուն, քարոզներուն, Ս. Գրային ընթերցումներուն, երգուող հոգեթով երգերուն եւ կատարուող ծէսերուն միջոցաւ կը պատմուի Քրիստոսի մարդեղութիւնը, խաչելութիւնը, մահը, հրաշալի յարութիւնը, յափտեանական բարեխօսութիւնը եւ երկրորդ գալուստը:

Ս. Հաղորդութեան Խորհուրդի արարողութիւնը պատարագ, զոհ կամ ընծայ կը կոչուի, որովհետեւ Ս. Հաղորդութեան Խորհուրդի արարողութեան ընթացքին Յիսուս օրինուած հացն ու գինին կը գոյափոխէ Իր մարմնոյն եւ արեան եւ ապա պատարագի քահանային ձեռքով՝ հաւատացեալներուն կողմէ կ'ընծայուի, (կը պատարագուի, կը նուիրուի, կը զոհուի) Հօր Աստուծոյ՝ մեղքերու քաւութեան համար: Այդ առիթով նաեւ զոհութիւն եւ փառաբանութիւն կը մատուցուի Աստուծոյ ու շնորհներ կը խնդրուին ներկաներուն համար:

Քրիստոս հացի եւ գինիի երեւոյթով Հօր Աստուծոյ ընծայուելով կը կատարէ իր յափտեանական բարեխօսութիւնն ու քաւութիւնը հաւատացեալ ժողովուրդին համար եւ ապա իբրեւ Կենդանի Հաց կը բաշխուի ու կը բնակի Ձինք ճաշակողներուն մէջ (ներսիդին):

ՈՐՈՒՆՔ ԿՐՆԱՆ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ ԵՒ ԻՆՉ Է ՔԱՀԱՆԱՅԻՆ ԴԵՐՈՎ:

Պատարագ կրնան մատուցանել քահանայական կարգ ունեցող եկեղեցական պաշտօնեաներ: Քահանան խորհրդակատարն է: Ան ժողովուրդին ներկայացուցիչն է Աստուծոյ սուրբ Սեղանին առջեւ, որով կ'աղօթէ իր եւ իր ժողովուրդին մեղքերու քաւութեան համար ու շնորհներ կը խնդրէ: Նոյն ատեն ժողովուրդին առջեւ ան փոխանորդն է Քրիստոսի, կ'արտասանէ Անոր խօսքերը եւ կը բաշխէ Անոր մարմինն ու արիւնը հաւատացեալներուն:

ԻՆՉ Է ՍԱՐԿԱԻԱԳԻՆ ՊԱՇՏՈՆԸ:

Սարկաւագը սպասաւորն է Ս. Պատարագի սեղանին: Ան միջնորդ է ժողովուրդին եւ պատարագի քահանային միջեւ: Իր պարտականութիւններն են՝ խնկարկել, Աւետարան կարդալ, վերաբերում կատարել, ժողովուրդը առաջնորդել Աստուծոյ երկրպագելու եւ ուշադրութեամբ հետեւելու արարողութեան, քահանայէն օրհնութիւն հայցել ժողովուրդին համար, Ս. Սեղանէն ստանալ Քրիստոսի յայտնութեան անետիսը եւ զայն ողջոյնով փոխանցել ժողովուրդին. իսկ արարողութեան լրումին հաւատացեալները հրափրել Փրկիչին մարմինն ու արիւնը ճաշակելու (Ս. Հաղորդութիւն):

ԻՆՉ Է ԴՊԻՐՆԵՐՈՒ ՊԱՇՏՈՆԸ:

Դպիրներու պաշտօնն է Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարել, կարդալ օրուան սաղմոսները, մարգարէական գիրքերը եւ առաքելական թուղթերը:

ԻՆՉ Է ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

Ժողովուրդին պարտականութիւնն է ուշադրութեամբ հետեւիլ արարողութեան, մեղմօրէն ձայնակցիլ դպիրներու երգեցողութեան, աղօթել Աստուծոյ եւ խնդրել Անոր ողորմութիւնը իր եւ պատարագիչին համար: Իսկ Ս. Հաղորդութեան մօտենալ հաւատքով, երկնաւարութեամբ եւ յարգանքով: Ինչպէս նաեւ իր աղօթքներուն կողքին, կարողութեանը համեմատ իր նիւթական մասնակցութիւնը բերել, որպէսզի հաւատքի կողքին բարի գործ մը կատարած ըլլայ Աստուծոյ առջեւ:

ՍԱՐԿԱԻԱԳՆԵՐԸ ՈՒ ԴՊԻՐՆԵՐԸ ԻՆՉՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ ՀԱՊԻՎՆԵՐ ԿՐ ՀԱԳՆԻՆ:

Եկեղեցական շապիկը Քրիստոսի անմեղութեան եւ սրբութեան խորհրդանիշն է: Իրաքանչիւր սարկաւագ կամ դպիր շապիկ հագնելով իր վրայ զգեցած կ'ըլլայ Քրիստոսը: Եկեղեցական շապիկը արտաքին նշան մը կամ ցուցանիշ մըն է սարկաւագներուն եւ դպիրներուն՝ սրբութեամբ ծառայելու եւ զգուշութեամբ քալելու համար Աստուծոյ տան մէջ:

Տաթև Ա. Քնյ. Միքայէլեան

ԱՍՏՈՒԱԾԱՆՈՒՆՉԻՆ ԿԱՆՈՆԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳԻՐՔԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՆԵՐ

Մովսէսէն առաջ գրականութիւն չկար: Նահապետական շրջանի պատմութիւնները եւ ընդունուած ընկերային օրէնքները բերանացի ասանդամով կը փոխանցուէին սերունդէ սերունդ: Մովսէսով էր, որ Աստուած երբայեցի ժողովուրդէն «ազգ» մը կազմաւորեց՝ Օրէնքը տալով անոր, եւ Մովսէս ինք եղաւ, որ Աստուծոյ յայտնութիւնն ու իր ժողովուրդին կրօնական փորձառութիւնը առաջին անգամ ըլլալով արձանագրեց այն գիրքերով, որոնց ամբողջութիւնը կը ճանչնանք իբրեւ Հնգամատեան:

Մովսէսէն ետք շարունակուեցաւ աստուածային յայտնութեան եւ կրօնական փորձառութեան արձանագրութեան այդ գործընթացը, եւ յառաջ եկան միա գիրքերը, որոնք այժմ կը ճանչնանք իբրեւ Յեսու, Դատարներ, Հռութ: Թագաւորութեան սկզբնաւորմով սկսաւ նաեւ Թագաւորներու գիրքերուն արձանագրութիւնը՝ գրեթէ օրը օրին, դէպքերու անմիջական տպաւորութեան տակ: Ժամանակագրութեան ձեւով: Անոնց կողքին սկիզբ առին նաեւ Դաւիթով, Սողոմոնով եւ ժամանակակից ուրիշ անծերով (Սամուէլ մարգարէ, Գաղ տեսանող, գրող առաջին մարգարէներ...) պայմանաւորուած գիրքերը, կամաց-կամաց դառնալով սրբազան գիրքերու փոքրիկ մատենադարանը:

Երբ էր, որ առաջին անգամ այս գիրքերը մէկտեղուեցան, եւ անջատ գրութիւններէն մէկ հաւաքածոյ կազմուեցաւ:

Վերը ըսինք, թէ սկիզբէն իսկ կար գատորշումը «աստուածաշունչ» գիրքերուն եւ ոչ-աստուածաշունչ գիրքերու: Աստուածաշունչին մէջ պահուած մասնակի տեղեկութիւնները մեզի ցոյց կու տան, որ սկիզբէն իսկ քահանայական դասը նախանձախնդիր եղաւ Աստուծոյ ներշնչումով եւ առաջնորդութեամբ գրուած գիրքերը առանձնացնելու միա գիրքերէն եւ զանոնք միասին պահելու: Այնպէս որ՝ այդ գիրքերուն ժողովածուն ինքնաբերաբար կար եւ կը պահուէր արդէն Վկայութեան Խորանին կամ տաճարին մէջ:

Այսպէս, օրինակ, Երկրորդ Օրէնք գիրքին մէջ կը կարդանք, որ Մովսէս Աստուծոյ կողմէ ասանդամ «Այս Օրէնքը գրեց, եւ զայն Տիրոջ Ուխտին տապանակը վերցնող Ղեւտացի քահանաներուն, եւ Իսրայէլի բոլոր աւագներուն տուաւ: Եւ Մովսէս անոնք պատուիրելով՝ ըսաւ.- «Եօթը տարին անգամ մը, թողութեան տարիին, Տաղաւարահարաց օտօսին, երբ ամբողջ Իսրայէլի ժողովուրդը կու գայ ձեր Տէր Աստուծոյն դիմաց կանգնելու անոր ընտրած տեղը, ամբողջ ժողովուրդին դիմաց այս Օրէնքը պիտի կարդաք, որպէսզի լսեն»: Եւ երբ Մովսէս այս Օրէնքին բոլոր խօսքերը գիրքի մը մէջ գրեց լմնցուց, Տիրոջ Ուխտին տապանակը վերցնող Ղեւտացիներուն [=քահանաներուն] պատուիրեց, ըսելով.- Առէք այս Օրէնքին գիրքը, եւ զայն ձեր Տէր Աստուծոյն Ուխտի տապանակին թով դրէք, որպէսզի հոն մնայ իբրեւ վկայութիւն ձեզի [=ժողովուրդին] դէմ» (Բ. Օր 31.9-11 եւ 24-26):

Նոյն Օրէնքի գիրքին կապակցութեամբ, Աստուած ինք Մովսէսի բերնով հետեւեալ պատուէրը կու տար իր ժողովուրդին հետագայ թագաւորներուն «Իր թագաւորական աթոռին նստելուն պէս՝ այս Օրէնքին գիրքին օրինակը իրեն համար ընդօրինակել պէտք է տայ Ղեւտացի քահանաներուն թով եղած օրինակէն, եւ անիկա իր թով պէտք է մնայ, որպէսզի իր կենքի բոլոր օրերուն կարդայ, եւ իր Տէր Աստուծմէն վախճալ սորվի, եւ այս Օրէնքին բոլոր խօսքերն ու այս կանոնները զգուշութեամբ ի գործ դնէ» (Բ. Օր 17.18-19):

Այս հատուածը որոշակիօրէն ցոյց կու տայ, որ Օրէնքի գիրքը առնուած երկու օրինակով կը պահուէր, մէկը քահանաներուն թով, միւրը՝ թագաւորներուն: Իսկ թէ «այս Օրէնքի գիրքը» բացատրութիւնը ճշդիւ ինչպէս պէտք է հասկնալ, միայն Երկրորդ Օրէնք գիրքին համար, ինչպէս Ս. Գրոց քննաբանութեան մէջ առհասարակ կենթադրուի, թէ՛ Օրէնք անունով ճանչցուած ամբողջ ժողովածոյին, այլ խօսքով՝ Հնգամատեանին համար, որ անցեալին մէկ ամբողջութիւն կը կազմէր: Տակաւին, պէտք չէ մոռնալ, որ Յեսուի գիրքը եւս անբաժան մէկ մասն էր առաջին գիրքերու այս խումբին եւ այդ պատճառով երբեմն բնորոշուած է նաեւ իբրեւ «Վեցամատեան»:

Մենք համոզուած ենք, որ «այս Օրէնքի գիրքը » բացատրութիւնը միայն Երկրորդ Օրէնքին համար չէ, այլ՝ յիշուած վեց գիրքերուն: Թագաւորութեան սկզբնաւորումէն առաջ արդէն իսկ վեց գիրքերու այս հաւաքածոն կազմուած էր եւ կը պահուէր Վկայութեան Խորանին մէջ, իսկ տաճարի շինութենէն ետք բնականաբար ի պահ դրուեցաւ տաճարի սրբարանին մէջ, Ուխտի Տապանակին թով, իբրեւ Աստուծոյ Խօսքին արձանագրութիւնը:

ԶԱՐԵՎ ԱՐՔ. ԱԶՆԱՌՈՐԵԱՆ
(ՀԱՐՈՒՆԱԿԵԼԻ 2)

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵՆԵՆ

ԲԱՆ ԽԱ.

Կենդանի Աստուծոյ ամենօրինեալ Որդի, տալիս Հօրդ անքնին ծնունդն եւ Դուռն, Քեզի համար չկայ բնաւ անկարելի բան, քու ողորմութեանդ փառքին անստուեր նշոյնները երբ կը ծագին, մեղքերը կը հալին, դէտերը կը հալածուին, յանցանքները կը ջնջուին, կապանքները կը խզուին, շղթաները կը խորտակուին, մահացածները կը կենդանանան, հարուածները կը բժշկուին, վերքերը կ'առողջանան, ապականութիւնները կը վերցուին, տխրութիւնները տեղի կու տան, հեծութիւնները կը նահանջեն, խաւարը կը փախչի, մէզը կը մեկնի, մտախուրդ կը հեռանայ. մտայլը կը փարատի, աղջամուղջը կը սպառի, մուրը կը վերնայ, գիշերը կ'անցնի, տագնապը կը տարագրուի, չարիքները կը ջքանան, յուսահատութիւնները կը հալածուին, ու Քու ամենակարող ձեռքը կը թագաւորէ, ով քալիչդ ամենայնի:

Դուռն որ եկար ոչ թէ կորսնցնելու՝ այլ ապրեցնելու մարդոց հոգիները, ներէ՛, Քու առատ ողորմութեամբդ, իմ անթիւ չարիքներս. վասնզի Դուռն միայն երկինքի մէջ անճառելի ես եւ երկրի վրայ անզննելի. գոյակներուն նախատարին եւ աշխարհի եզրածայրերուն մէջն ես Դուռն. ամէն բանի սկիզբն ես, ու ամէն բանի մէջ ամբողջ, օրհնեալ եղիր բարձունքներու մէջ, ու Քեզի՛ Հօրը եւ Սուրբ Հօգիին հետ փանք, յափտեանս:





ՄԵԾ ՊԱՀՈՑ ԿԻՐԱԿԻՆԵՐԸ

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Տարուան ընթացքին, տրոնի սոսերու ոգեկոչումներէն եւ սրբոց յիշատակութեանց առիթներէն անջատ, եկեղեցին մեր դիմաց կը բանայ նաեւ պահեցողութեան զանազան շրջաններ:

Իւրաքանչիւր պահեցողութեան շրջանը կանխող Կիրակին կը կոչուի Բարեկենդան, որ կը նշանակէ բարի կենդանութիւն: Այս բացատրութեան հիմնական նշանակութիւնն է, որ ժուժկալ եւ պահեցողութեան օրերէն առաջ ճոխ սեղան սարքել եւ ուրախութեամբ կնքել ուտիքի օրերը:

Բոլոր Բարեկենդանները Կիրակի օր կը կատարուին, բացի Ս. Ծննդեան տօնի Բարեկենդանէն, որ անփոփոխ կերպով կը կատարուի 29 Դեկտեմբերին: Իսկ եթէ Դեկտեմբեր 29-ը զուգարիպի Չորեքշաբթի կամ Ուրբաթ օրուան, Բարեկենդանը 28 Դեկտեմբերին կը կատարուի եւ 29-ին պահեցողութիւնը կը սկսի:

Պահեցողութեան շրջաններուն մէջ ամենէն երկարը եւ գլխաւորը Մեծ Պահքն է, 48 օրերու երկարութեամբ, այդ պատճառով ալ Մեծ Պահքը կանխող Կիրակին կը կոչուի Բուն Բարեկենդան, որուն կը յաջորդէ եօթը շաբաթներու պահեցողութեան, ժուժկալութեան եւ սննդառութենէ զրկանքի շրջանը:

Այս իսկ պատճառով ասանդութիւն դարձած է ճոխ սեղաններով եւ ուրախութեամբ անցնել Բուն Բարեկենդանի զիջերը: Մեծ Պահքը առաջին Կիրակին՝ Բուն Բարեկենդանը նաեւ ոգեկոչումն է աստուածային ստեղծագործութեան եւ նախածնողներու դրախտային կեանքին:

Սրբազան շարականագիրը հետեւեալ ձեւով կը ներկայացնէ զայն.-
«Բանն Աստուած էակից է Հօր, եւ համագոյ է Ս. Հոգոյն: Ան իր պատկերը խառնեց հողանիւթ (մարդու) բնութեան, զոր փառքով զարդարեց եւ երանական դրախտին մէջ դրաւ: Այն ատեն մարդը կը ցնծար եւ անտխոր խնդրութեամբ կ'երջանականար, քանի որ կը տեսնէր զԱստուած, որ դրախտէն ներս ինքզինք խոնարհեցնելով տեսանելի կ'ընծայէր: Եւ անոր լոյսին ճառագայթը կը դրոշմուէր մարդու էութեան մէջ»:

ԱՐՏԱՔԱՄԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի Կիրակիները կը յուշեն մեզի, թէ կը գտնուինք զղջումի եւ ապաշխարութեան շրջանի մը մէջ: Իւրաքանչիւր Կիրակի անուանում մը ունի: Իւրաքանչիւրը Խորհուրդի մը ընդմէջէն կը փորձէ մեզ վերականգնել մեր հոգեւոր աշխարհին մէջ:

Մենք տեսանք, թէ ինչպէս Բուն Բարեկենդանը՝ Մեծ Պահքի Ա. Կիրակի օրը կը յիշատակէր նախամարդուն դրախտային կեանքը: Ա հաւաստի, երկրորդ Կիրակին կու գայ յիշեցնելու մեզի նախամարդուն անկումը՝ պարտազանց մարդուն արտաքսումը դրախտային կեանքէն:

Եւ այս խորհուրդը Ծնորհալի Հայրապետ հետեւեալ բառերով կը ներկայացնէ օրուան շարականներուն մէջ. - «Մեր նախահօր դրախտային կեանքէն զրկուած ըլլալու տրտմութեան հետ, մենք եւս ընդունինք ապաշխարութեան տրտմութիւնը, որպէսզի Քրիստոսի յարութեամբ արժանի դառնանք եկեղեցւոյ դրախտային կեանքէն ներս մտնելու»:

Բնականաբար Երանանքար Ս. Հայրապետին ակնարկութիւնը՝ Մեծ Պահքի ընթացքը ներկայացնել է, ուր զղջումի եւ ապաշխարութեան ճանապարհով՝ վերականգնման հնարաւորութիւն կը տրուի մարդուն :

Ուստի Արտաքսման Կիրակին, առաջին հերթին եթէ կը յիշատակէ նախածնողներու արտաքսումը դրախտային կեանքէն, նաեւ մեղանշական բնութեամբ մարդը կ'առաջնորդէ Մեծ Պահքի հնցին մէջ իր մեղքերը այրելու, պայծառացեալ սրտով դիմաւորելու համար Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութիւնը:

ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի երրորդ Կիրակին կը կոչուի Անառակի Կիրակի, որովհետեւ նոյն օրը ճաշու Աւետարանի ընթերցման պահուն կը կարդացուի Անառակ որդիին առակը (Ղկ. Գլ. ԺԵ. 11-32): Յիսուսի գեղեցիկ եւ իմաստայից առակներէն մին է ասիկա, որ խօսեցաւ երբ Փարիսեցիներ եւ Օրէնքի ուսուցիչներ կը քննադատէին զինք, թէ ինչպէս ան մաքսատուներն ու մեղաւորները կ'ընդունի եւ անոնց հետ ճաշի կը նստի:

Որպէս պատասխան Յիսուս երեք առակներ խօսեցաւ. - Կորսուած ոչխարին առակը, Կորսուած դրամին առակը եւ Անառակ որդիին տուն դարձի առակը: Այս երեք առակներով Յիսուս բացայայտեց, մեղաւորները դարձի բերելու իր առաքելութիւնը:

Անառակ որդին զեխ կեանք մը ապրելով՝ ամէն ինչ կորսնցուց, եւ երբ իր ինքնագիտակցութիւնը զինք զղջումի առաջնորդեց եւ տուն վերադարձաւ, գթասիրտ հայրը զինք ուրախութեամբ ողջունեց, եւ անոր հետ գիրկընդխառնուեցաւ, որովհետեւ ան կորսուծ էր՝ գտնուեցաւ, մեռած էր՝ ողջնցաւ:

Այս առակին ուրուագծումը ինքնին կը բացայայտէ, թէ ինչպէս մարդկային տկար բնութեան անկումին դիմաց, հայրական գթասիրտ կեցուածքն է, որ կը ծաղկի: Քրիստոսի Սարդղութեան Խորհուրդի առաքելութիւնն էր մեղաւորները դարձի բերել, անկեալները վերականգնել, կեանքի յորձանքներուն մէջ ինկած յուսահատներուն յոյս շնորհել, եւ այս բոլորին ճառագայթով օրինակն էր Անառակ Որդիին առակը, որուն դիմաց կարկամեցան Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները, որոնք փորձած էին քննադատել Քրիստոսի հայրական ներող կեցուածքը, որ կու գար յեղաշրջելու մարդկային մտածողութիւնը եւ դէպի յափտենականութիւն առաջնորդող՝ նոր ճանապարհ մը բանալու մարդուն դիմաց:

ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի Դ. Կիրակին կը կոչուի Տնտեսի Կիրակի, որովհետեւ ճաշու Աւետարանի ընթերցման պահուն կը կարդացուի Ղուկաս Աւետարանիչի ԺԶ. գլուխը, ուր լուսարձակի տակ կ'առնուի Քրիստոսի կողմէ ներկայացուած Տնտեսի եւ Մեծատանն ու Ղազարոսի երկու առակները:

Անոնց առանցքը մարդն է: Առաջինին մէջ, մարդը, որ իր աշխատանքէն ազատ արձակուելով կը տագնապի ապագայ իր ապրուստով, եւ առ այդ՝ հազար ու մէկ հաշիւ կ'ընէ՝ մամոնայով բարեկամներ սիրաշահելու, ապագայի կեանքը լաւագոյնս տնտեսելու համար, բայց կը մոռնայ կեանքը հիմնաւորող եւ զսպանակող ոյժը՝ զԱստուած, որ կեանքին աղբիւրն է: Իսկ երկրորդը հարստութեան մէջ յղկացած մեծահարուստն է, որուն կեանքին իմաստը եսասիրութեան շրջագիծին մէջ օղակուած ըլլալով, կը մտածէ միայն ինքն իր մասին, անտեսելով իր դրան առջեւ ծուարած, օրուան հացին կարօտ՝ աղքատ Ղազարոսը, որուն վարձատրութիւնը արքայութիւնը կ'ըլլայ իսկ մեծատունինը՝ դժոխքի կրակը:

Անշուշտ երկու առակներուն հիմնական նպատակը Մեծ Պահքի ընթացքին մարդկային դիմագծութեան կերտումն ու զղջումի ճանապարհով՝ հոգիին պատրաստութիւնն է, ողջունելու համար հանճարահրաշ Խորհուրդը՝ Աստուածորդային Ս. Յարութիւնը:

ԴԱՏԱԻՈՐԻ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի հինգերորդ Կիրակին կոչուած է Դատարի Կիրակի, որովհետեւ ճաշու Աւետարանի ընթերցումը մեզի կը ներկայացնէ Անիրաւ Դատարարին եւ Փարիսեցիին ու Մաքսատրին առակները:

Երկու առակներն ալ աղօթքի մասին են: Առաջինը՝ կը սորվեցնէ մեզի առանց յուսահատելու, յարատեւօրէն աղօթելու հաւատքը, որովհետեւ ամենագութի ու ամենաբարին Աստուած անպայմանօրէն պիտի լսէ մեզ: Իսկ երկրորդը՝ թէ ինչպէս պէտք է աղօթել, որովհետեւ սրտբաց եւ անկեղծ աղօթքին դիմաց՝ անպայմանօրէն աստուածային ներումը պիտի արդարացնէ մեզ:

Մաքսատրը արդարացած դուրս եկաւ տաճարէն, որովհետեւ մեղաւոր սիրտը բացաւ Աստուծոյ եւ ներում ստացաւ: Իսկ փարիսեցիին փորձեց իր արարքներով հպարտանալ, ինչ որ պատճառ դարձաւ, որ ան նոր մեղքերով ծանրաբեռնուած դուրս գայ տաճարէն:

ԳԱԼՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի վեցերորդ Կիրակին կը կոչուի Գալստեան Կիրակի: Արդէն իսկ մօտեցած ենք Մեծ Պահքի վերջին՝ եօթներորդ շաբթուան, երբ հոգեւոր պատրաստութեան շրջանը իր ասարտին պիտի հասնի:

Գալստեան Կիրակին իր շարականներով կը բացայայտէ Քրիստոսի առաջին աշխարհ գալուստն ու տակաւ իր վախճանին հասնող անոր առաքելութեան պակասումը՝ Աստուածորդային տնօրինական կեանքին վերջին յուզիչ դէպքերով:

Օրուան յատուկ՝ Օրհնութեան շարականը գեղեցկօրէն կը ներկայացնէ Գալստեան մեծ Խորհուրդը, զորս նախապէս գուշակած էին մարգարէները եւ Ս. Հոգոյն ներշնչումով բազում օրինակներով ծանուցած էին անոր մասին: Կու գար Ան ծառայի կերպարանք զգեցած, կու գար որպէս Փրկիչ մարդկութեան: Կու գար որպէս նոր Ադամ պարտազանց նախածնողներու մեղքը ջնջելու եւ կորուսեալները դարձի բերելու:

Վերոյիշեալ մտածումներով, Մեծ Պահքի վեցերորդ Կիրակին՝ զղջումի եւ ապաշխարութեան հոգեվիճակին մէջ գտնուող քրիստոնէայ անհատը կ'առաջնորդէ վերականգնելու Գալստեան մեծ Խորհուրդով, եւ միանգամայն կը շեշտէ մարդացեալ Աստուածորդային առաքելութիւնը՝ վերականգնման եւ փրկութեան ճանապարհին:

Ահա այս մտածումը ինքնին՝ պակասումն է օրուան ճաշու Աւետարանի պատգամին, որ կ'ըսէ.
- «Բայց կ'ըսեմ նաեւ, ալ պիտի չտեսնէք զիս, մինչեւ որ ըսէք. Օրհնեալ ըլլայ ան՝ որ կու գայ Տիրոջ անունով» (Մատթ. Գլ. ԻԳ. 39):

ՏՕՆԱՑՈՅՑ - ՄԱՐՏ

Ուրբ. 1 Մարտ –	ԺԺ. օր Մեծի Պահքի:
Շբթ. 2 Մարտ –	Ի. օր Մեծի Պահքի: Տօն Սրբոյն Յովհաննու Երուսաղեմայ Հայրապետին, եւ Սրբոց Հայրապետացն մերոց՝ Յովհաննու Օծնեցոյն, Յովհաննու Որոտնեցոյն, եւ Գրիգորի Տաթեւացոյն:
Կիր. 3 Մարտ –	ԻԱ. օր Մեծի Պահքի: Դ. Քառասնորդաց: ՏՆՏԵՍԻՆ:
Բշ. 4 Մարտ –	ԻԲ. օր Մեծի Պահքի:
Գշ. 5 Մարտ –	ԻԳ. օր Մեծի Պահքի:
Դշ. 6 Մարտ –	ԻԴ. օր Մեծի Պահքի:
Եշ. 7 Մարտ –	ԻԵ. օր Մեծի Պահքի:
Ուրբ. 8 Մարտ –	ԻԶ. օր Մեծի Պահքի:
Շբթ. 9 Մարտ –	ԻԷ. օր Մեծի Պահքի: Տօն Սրբոց Մանկանցն Քառասնից որք ՚ի Սեբաստիա կատարեցան:
Կիր. 10 Մարտ –	ԻԸ. օր Մեծի Պահքի: Ե. Քառասնորդաց: ԴԱՏԱԻՈՐԻՆ:
Բշ. 11 Մարտ –	ԻԹ. օր Մեծի Պահքի:
Գշ. 12 Մարտ –	Լ. օր Մեծի Պահքի:
Դշ. 13 Մարտ –	ԼԱ. օր Մեծի Պահքի:
Եշ. 14 Մարտ –	ԼԲ. օր Մեծի Պահքի:
Ուրբ. 15 Մարտ –	ԼԳ. օր Մեծի Պահքի:
Շբթ. 16 Մարտ –	ԼԴ. օր Մեծի Պահքի: ՏՕՆ Է ՍՐԲՈՅՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒԿԱՒՈՐԶԻՆ ՄԵՐՈՅ ՍՈՍԿԱԼԻ ՉԱՐՉԱՐԱՆԱՅՆ ԵՒ ՄՏԱՆԵԼՈՅՆ ՚Ի ՎԻՐԱՊՆ:
Կիր. 17 Մարտ –	ԼԵ. օր Մեծի Պահքի: Զ. Քառասնորդաց: ԳԱԼՍՏԵԱՆ:
Բշ. 18 Մարտ –	ԼԶ. օր Մեծի Պահքի:
Գշ. 19 Մարտ –	ԼԷ. օր Մեծի Պահքի:
Դշ. 20 Մարտ –	ԼԸ. օր Մեծի Պահքի:
Եշ. 21 Մարտ –	ԼԹ. օր Մեծի Պահքի:
Ուրբ. 22 Մարտ –	Խ. օր Մեծի Պահքի:
Շբթ. 23 Մարտ –	Յիշատակ է Յարութեանն Ղազարու:
Կիր. 24 Մարտ –	ՇԱՂԿԱԶԱՐԴ
Բշ. 25 Մարտ –	ԱԽԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ:
Գշ. 26 Մարտ –	ԱԽԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ:
Դշ. 27 Մարտ –	ԱԽԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ:
Եշ. 28 Մարտ –	ԱԽԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ: (Յիշատակ Ընթերցեց Տեսնոն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ Ունկրայն):
Ուրբ. 29 Մարտ –	ԱԽԱԳ ՈՒՐԲԱԹ: (Յիշատակ Չարչարանաց, Խաչելութեան եւ Թաղման Տեսնոն մերոյ Յիսուսի Քրիստոսի):
Շբթ. 30 Մարտ –	ԱԽԱԳ ՇԱԲԱԹ: ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ
Կիր. 31 Մարտ –	Ս. ՉԱՏԻԿ: ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՐՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

ՇԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

Azerbaijan dismantles Charles Aznavour monument in Stepanakert

YEREVAN—Azerbaijan has dismantled a monument of Charles Aznavour in Stepanakert, which was erected next to the Paul Eluard Francophone Centre in celebration of the singer's 100th birthday in 2022.

Artsakh's State Council for the Protection of Cultural Heritage shared two photos of the Charles Aznavour monument, as well as a screengrab from an apparent video of the same location posted in January 2024.

Earlier, the monuments of poet Hakob Hakobyan, philan-

thropist Alex Manoogian, politician Alexander Miasnikian, admiral Hovhannes Isakov, military leaders Anatoly Zinevich and Kristapor Ivanyan, and others were dismantled.

A screengrab from a recent video indicates that the Charles Aznavour monument has been dismantled. The monument of Artsakh Hero Ashot Ghulyan in Stepanakert was also dismantled.

Videos shared on social media depict graves of soldiers killed during the Artsakh Liberation War being vandalized.

Azerbaijan's slaughter of Armenians has gone unpunished starting 36 years ago with Sumgait pogroms

YEREVAN—The modern-day slaughter of Armenians by Azerbaijan went unpunished beginning with systematic pogroms of Armenians in the Azerbaijani city of Sumgait in 1988.

In response to democratic calls by the people of Artsakh to unify with Armenia, sparking the Artsakh Liberation Movement, Soviet Azerbaijani special forces began to round up Armenians in the city of Sumgait on February 27, 1988.

This was the beginning of a terror campaign. Similar pogroms occurred in Kirovabad, Baku and other regions of Azerbaijan. None of these attacks were condemned or punished, thus giving Azerbaijan the impunity to continue its

aggression against Armenia and Artsakh, which culminated in the brutal 2020 war and the attack last fall on Artsakh that forcibly displaced hundreds of thousands of Artsakh Armenians.

In 2024, 36 years after the planned pogroms, the United States and the European Union representations in Yerevan issued brief statements "mourning" the victims of the pogroms — more than three decades too late.

Armenia's foreign ministry on February 27 said the impunity gave Azerbaijan the green light to ethnically cleanse Artsakh of its Armenian population, adding that Azerbaijani is continuing its policy of "erasing any trace of Armenians."

Armenian Community of Jerusalem initiates legal action to protect Patriarchate garden

JERUSALEM—The Armenian community of the historic Armenian Quarter on February 20 officially filed a lawsuit to invalidate the lease between the Armenian Patriarchate and Xana Capital.

The community's legal action asserts that the property is held in trust specifically for the benefit of the Armenian community pursuant to a waqf trust established more than 400 years ago. Under the waqf trust, which is legally enforceable, the property cannot be leased or sold by the Patriarchate if the transaction does not inure to the direct benefit of the Armenian community and if the transaction is not consented to by the Armenian community. Here, the transaction has neither been consented to by the Armenian community nor does it inure to the benefit of the Armenian community.

The Armenian community's position aligns squarely with the stance of the Saint James Brotherhood. In 2021, seventeen members of the Brotherhood, a majority of the members of the supreme body of the Patriarchate, issued a

statement publicly opposing the deal and declaring that the Patriarch lacked the requisite authority and conditions to execute the purported agreement. As such, the Armenian community's legal case underlines the Patriarchate's lack of authority to enter into this specific deal.

The community's lawsuit gives necessary legal voice and crucial legal strength to the objective of cancelling the purported agreement and protecting the land — a goal the Armenian community, the Armenian Patriarchate and the global Armenian diaspora share.

The Armenian community has specific rights that must be raised and must be protected by the Armenian community itself. This land holds immense historical and cultural significance, symbolizing the community's and the Patriarchate's enduring presence in the region, and the community is committed to preserving the integrity of the Armenian Quarter of Jerusalem and protecting itself from the existential threat posed by this purported deal with Xana Capital.

Socialist International calls for collective return of Artsakh Armenians

MADRID — A meeting of the Council of Socialist International from February 24 to 25 at the headquarters of the Spanish Socialist Workers' Party in Madrid, adopted a resolution calling for the collective return of Artsakh Armenians, among other measures to ensure the rights of Artsakh Armenians.

Since 1907, the Armenian Revolutionary Federation has been a member of SI — largest political organization which unites political parties from around a hundred countries. Mario Nalbandian, a former member of the ARF Bureau, and a member of the Armenian National Committee-International, is one of the vice-presidents of the Socialist International. He participated in the meetings of the Council and the Presidium, and was elected member of the SI Finance and Administration Committee.

The President of the Socialist International, Spain's Prime Minister Pedro Sanchez, in his opening remarks referred to the Nagorno Karabagh issue.

At the meetings of SI Presidium and Council Nalbandian presented the situation and challenges caused by Azerbaijan's genocidal ethnic cleansing of Artsakh, as well as Baku's continued aggression and threats against Armenia.

The SI Council adopted a resolution on the Artsakh issue, which states:

The Socialist International supports the negotiations between Armenia and Azerbaijan aimed at signing a peace agreement. To contribute to the establishment of peace and stability in the region such an agreement should be reached without the use of force or the threat of force, based on international law and diplomatic practice. including a commitment to an internationally sponsored peaceful process towards a final political settlement of the Nagorno Karabagh issue and the full realization of the fundamental rights and security of the people of Nagorno Karabagh on their ancestral territory.

In line with our long-standing principled policy regarding the Nagorno Karabagh issue and the con-

flict between Armenia and Azerbaijan, and considering the 17 November 2023 provisional measure by the International Court of Justice ordering Azerbaijan to "ensure that persons who have left Nagorno Karabagh after 19 September 2023 and who wish to return to Nagorno Karabagh are able to do so in a safe, unimpeded and expeditious manner;" and "are free from the use of force or intimidation that may cause them to flee;" we reiterate our call:

Until the final political settlement of the Nagorno Karabagh issue and the full realization of the fundamental rights of the people of Nagorno Karabagh, for the collective, unhindered, and safe return to their homeland. Also, for the provision of an intermediate status for Nagorno Karabagh — ensuring the full extent of the civil and political rights and providing effective security guarantees for the people of Nagorno Karabagh, as well as unhindered land connection with Armenia — guaranteed by international norms.

For the release of prisoners of war and detained persons.

For the complete and simultaneous lift of the blockades of transport and other means of communication, without any restriction of sovereignty.

The Socialist International stands ready to assist in these processes through its good offices and with the participation of its member parties and organizations.

The meeting of the Council of the Socialist International also made decisions on organizational issues and adopted the Madrid Declaration.

The Socialist International is the worldwide organization of social democratic, socialist and labour parties. It currently brings together 132 political parties and organizations from all continents. The relevant structures of the ARF are full members of the Socialist International Women (SIW) and the International Union of Socialist Youth (IUSY). Sarine Abrahamian, from the ARF Youth, is a vice-president of IUSY.

(Armenian National Committee — International)

Yerevan, Baku agree to continue talks

BERLIN—The foreign ministers of Armenia and Azerbaijan concluded talks in Berlin on February 29, saying that they agreed to continue negotiations on remaining unresolved issues.

Talks between Ararat Mirzoyan and Jeyhum Bayramov kicked off at the Villa Borsig in Germany's capital the previous day, with one session being held with their German counterpart Annalena Baerbock.

"The ministers and their delegations discussed perspectives on the provisions of the draft bilateral Agreement on Establishment of Peace and Interstate Relations between Armenia and Azer-

baijan. Mutual agreement was expressed to continue negotiations on the open issues," Armenia's foreign ministry spokesperson Ani Badalyan said in a statement, without elaborating on the so-called unresolved issues.

The talks were held against the backdrop of the 36th anniversary of Azerbaijani pogroms of Armenians in Sumgait, which served a precursor to other such brutal attacks against Armenians in Kirovabad, Baku, Maraga, Shahumyan and elsewhere.

The negotiations also followed two attacks by Azerbaijani forces against Armenian positions in the Gegharkunik

and Syunik provinces, during the latter of which four Armenian soldiers were killed.

Earlier this month, Prime Minister Nikol Pashinyan and President Ilham Aliyev of Azerbaijan met on the margins of the annual Munich Security Conference. That meeting was mediated by German Chancellor Olaf Scholz.

"We, as the Federal Government, support peace talks wherever possible. So that wounds can heal and people can achieve peace. Every meter on the way there matters," Baerbock, the German foreign minister, said in a social media post after the talks.

AGBU President Berge Setrakian retires, Central Board names Sam Simonian as successor

NEW YORK — Following a tenure of 22 years as President of the Armenian General Benevolent Union with 47 years as Central Board member, Berge Setrakian will retire this fall from his position in accordance with the age limit requirements of the bylaws of AGBU.

The AGBU Central Board, with the approval of the AGBU Council of Trustees, on February 24 unanimously recommended the nomination of Sam Simonian as his successor and the organization's eighth president. Simonian will be formally elected at AGBU's 93rd General Assembly to be held in New York City on October 12, 2024 and Setrakian shall join

the Council of Trustees.

Simonian is currently a member of the AGBU Council of Trustees following his service on the Central Board from 2000 to 2019. His active involvement with AGBU throughout his life parallels his numerous accomplishments as a business entrepreneur, engineering professional and philanthropist. Both he and his wife Sylva are graduates of AGBU's schools in Lebanon. They founded the TUMO Center for Creative Technologies in Armenia—a breakthrough in afterschool education that allows students to take charge of their own learning in the tech and design space, thereby raising their competi-

tiveness quotient in the global economy. Since launching the flagship TUMO Center, the brand has reached the far corners of Armenia and expanded to multiple cities around the world.

After the vote on February 24 at the AGBU Central Office in New York, President Setrakian reflected on the auspicious choice of Simonian.

"Without doubt, Sam Simonian is highly qualified to run an organization of the size, scope and reach of AGBU. Sam respects the AGBU legacy, passionately believes in its core mission, yet recognizes that for a venerable insti-

A Mari Usque Ad Mare

MINISTER MACAULAY ANNOUNCES \$177-MILLION FOR WINE SECTOR SUPPORT PROGRAM

Lawrence MacAulay, Minister of Agriculture and Agri-Food, recently visited the Trius Winery in Niagara-on-the-Lake, Ontario and during the visit announced a new investment for a program that will support the Canadian wine sector to further improve its competitiveness and help support any challenges that they may face. This investment will consist of \$177-million that will be funded through the Wine Sector Support Program. In addition to this investment Minister MacAulay also announced a combined investment of over \$6-million for two initiatives under the Sustainable Canadian Agricultural Partnership; the first is an initiative will be led by the Canadian Grapevine Certification Network to advance science and research and the second initiative will be funded under the AgriScience Program, called Clusters Component for the Grape and Wine Cluster.

"Canada's wine sector creates jobs, drives economic growth, and supports so many communities right across the country. This extension of the Wine Sector Support Program will provide vitally important support to our wineries as they continue to innovate and adapt to challenges so the sector can stay strong and competitive for years to come," said Minister MacAulay.

"Today's announcement is great news for Canada's wine sector. By extending this program, we are recognizing the vital role wineries play in the economy and we will continue to help them thrive for years to come," said Chris Bittle, Parliamentary Secretary to the Minister of Canadian Heritage and MP for St. Catharines, Ontario.

CANADA TO INVEST IN CRITICAL CANADIAN CRISIS AND DISTRESS LINE SECTOR

